

# ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

**DEGHEGADOU**

**ديجيجادو**

Հասցեականությունը Գառնիքի Հ.Գ.Ը.Մ.Բ

نشرة جمعية القادسية الخيرية الأهلية العامة



**ԳԱԿԻՐԷԻ ԿՐԸՄ—Ի ԾՐԱԾԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳՁԱՆՈՒԹՅԱՐԸ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	<b>Ե իպտահայ Թեմը Յանձին S. Աշոտ Կրդ. Մնացա- կանեանի կ'ունենայ Իր Նոր Առաջնորդը</b>	<b>1</b>
	<b>Կարելոր Պայմանա ղի Կնքում Երեւանի Եւ Գահիրեի Պետական Համալսարաններուն Միջեւ</b>	<b>2</b>
	<b>Ստորումներ Միասնականութեան Շուրջպարին Կայացման Առիթով</b> Արաքսի Տեղալեւան	<b>3</b>
<b>ԽՍԲԱԳԻՐ</b> Արաքսի Տեղալեւան	<b>«Հայաստանի Օր» Մաստիի Գրադարանէն Ներս</b>	<b>3</b>
	<b>Գրի որ Լուսաւորիչ Ներկայացուած՝ Իր Սրբութեան Եւ Արուեստներու Մէջ</b> Տիգրան Գեորգեան	<b>5</b>
<b>ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ</b> <b>ՁԵԼԱԻՐՈՒԹՄ</b> <b>ՇԱՀԷ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ</b>	<b>Թ. - ԺԷ. Դարերու Անանուն Հայ Մանրանկարիչներու Մատենա Խտութիւնը</b> Տիգրան Գեորգեան	<b>7</b>
	<b>Գահիրեի ՀԲԸՄ-ի Ծիածան Մանկական Եր - չախումբին Անդրանիկ Համեր ղ</b> Արաքսի Տեղալեւան	<b>9</b>
<b>ՀԱՍՏԱԿԱՐԳՉԱՅԻՆ</b> <b>ՇԱՐՈՒՄԸ</b> <b>Անի Պօղոսեան</b>	<b>Հարցազրոյց Սօ. Միհրան Ղազէլեանի Հետ</b> Անի Պօղոսեան	<b>12</b>
	<b>Հո եհան Խստ Սաթենիկ Գ. Չա ղը</b>	<b>15</b>
	<b>Տիար Պերճ Թերզեանի Հրապարակային Ձեկոյցը Եղեռնի 90-Ամեակին Առթիւ Երեւանի Մէջ Կայացած Միջազ - ային Համաժողովին Մասին</b>	<b>16</b>
	<b>Մանկավարժական Դաստիարակութեան Հիմունքները</b> Աւետիս Պազգալեան	<b>18</b>
	<b>Տոքթ. Աւետիս Եափուճեանի Պատուաբեր Պար եւատրումը</b>	<b>20</b>
	<b>Մեր Գաղութէն Ներս</b> <b>«Սարտարապատ» Պարախումբին Ելոյթը</b> <b>Ընկերային Օր Կարապետ Աղա Արիկեան</b> <b>«Այծեմնիկ» Հան - ստեան Տան Մէջ</b> Անի Պօղոսեան	<b>21</b> <b>21</b>
	<b>Սաթենիկ Գ. Չա ղը Հիմնադրամ Կրթական Օժանդակութիւն 2005-2006 Տարեշրջան</b>	<b>22</b>
	<b>Սաթենիկ Գ. Չա ղը Հիմնադրամ Կրթական Մրցանակներ</b>	<b>23</b>
<b>Թի 36 Նոր Շրջան</b> <b>Յուլիս 2005</b>	<b>Անդամական</b>	<b>24</b>



## ԵԳԻՊՏԱՆԱՅ ԹԵՄԸ ՅԱՆՁԻՆ Տ. ԱՇՈՏ ՎՐԴ. ՄԱՑԱԿԱՆԵԱՆԻ ԿՈՒՆԵՆԱՅ ԻՐ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ


Եգիպտահայ Թեմի հոգեւորյա Առաջնորդ Տ. Չաւեն Ա. Արք. Չինչինեանի վախճանումով (2004 Յունուար 20) թափուր մնացած Առաջնորդական Աթոռը Կիրակի 22 Մայիս 2005-ին ունեցաւ իր նորընտիր Առաջնորդը:

Գահիրէի Առաջնորդարանի դահլիճին մէջ, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Թեմական Ժողովներու անդամներուն ներկայութեամբ եւ Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահ Յոզ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեանի նախագահութեամբ գումարուած Թեմական Համագումարը, միաձայնութեամբ Եգիպտահայ Թեմի Առաջնորդ ընտրեց՝ Յոզ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեանը:

2002 թ. Մայիս 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ Յոզ. Հայր Աշոտ ծառայութեան կոչուած էր Եգիպտահայ Թեմէն ներս եւ նոյն թուականի Հոկտեմբեր 14-ին Գահիրէի Առաջնորդական Փոխանորդ նշանակուած, իսկ 2004 Փետրուարին՝ ընտրուած նոյն Թեմի Առաջնորդական Տեղապահ:

Յոզ. Հայրը 1972-ին Գորիսի Տաթև գիւղին մէջ ծնած է եւ միջնադարեան նշանաւոր հոգեւոր եւ մշակութային կեդրոն հանդիսացող Տաթևի վանքին շրջակայքը հասակ նետած: Ան աւարտած է տեղւոյն միջնակարգ դպրոցը, ապա՝ յաճախած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր ճեմարանը զոր աւարտած է 1989-ին: Սարկաւազ ձեռնադրուած է 1995-ին:

1996-ին, Ս. Էջմիածնի մէջ, Գերշ. Տ. Շահե



Արք. Աճեմեան զայն ձեռնադրած է կուսակրօն քահանայ:

Մինչեւ Եգիպտահայ Թեմէն ներս ծառայութեան կոչուիլը, 1996-1998 եղած է Մայր Աթոռի ձեռագրատան պատասխանատուն եւ 1996-ի Յունիսէն մինչեւ 2001-ի Դեկտեմբերը՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի եկեղեցական յանձնաժողովի Մայր Աթոռի գրասենեակի պատասխանատուն, միաժամանակ մինչեւ 2000 թ. մասնակցած է Մայր Աթոռ

Ս. Էջմիածնի քրիստոնէական դաստիարակութեան եւ քարոզչական Կեդրոնի ուսուցիչներու պատրաստութեան՝ դասաւանդելով «Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն»:

2002 թուականի Մարտի 16-ին, պաշտպանելէ ետք իր պատրաստած «Անառակ Որդիին Առակը Հայ Մեկնողական Գրականութեան Մէջ» վարդապետական թեզը, Գերշ. Տ. Միքայէլ Եպիսկոպոս Աջապահեանի ձեռամբ ստացած է վարդապետական աստիճան:

2002-2005 Յոզ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեան հաւատարիմ իր կոչումին, իր երիտասարդ պատրաստուած հոգեւորականի աւիւնն ու կարողութիւնը ի սպաս դրաւ մեր գաղութին ու եկեղեցիին ծառայութեան:

Եգիպտահայ Թեմին Առաջնորդ ընտրուելուն առիթով, Հոգեշնորհի Հօր կը մաղթենք առաւել ուժ եւ եռանդ ու անխափան գործունէութիւն:

«Տ.»



## **ԿԱՐԵՒՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ԳԱՇԻՐԷԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ**

Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ կնքուած համագործակցութեան իւրաքանչիւր պայմանագիր անկասկած բարեկամական օղակ մը եւս կ'աւելցնէ երկու երկիրներուն ժողովուրդներուն միջեւ եւ կ'ուրախացնէ մանաւանդ մեզ եգիպտահայերս:

Համաձայն Եգիպտոսի ՀՀ Դեսպանատան տուած մամլոյ հաղորդագրութեան, Յուլիս 17-ին Գահիրէի Համալսարանին մէջ, Երեւանի Պետական Համալսարանի տնօրէնին լիազօրութեամբ Եգիպտոսի մօտ ՀՀ Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեան եւ Գահիրէի Համալսարանի Նախագահ Ալի Ապտէլ Ռահման ստորագրեցին կարելոր պայմանագիր մը, որ կը Նախատեսէ գիտական, կրթական եւ դասաւանդման բնագաւառներու բազմաբնոյթ համագործակցութիւն երկու համալսարաններուն միջեւ:

Պայմանագիրը կը Նախատեսէ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ինտերներու մասին ուսումնասիրութիւններու կատարում, դասախօսներու ասպիրանտներու եւ ուսանողներու փոխայցելութիւններու իրականացում, ինչպէս նաեւ Երեւանի Պետական Համալսարանի Արաբագիտութեան Ամպիոնի գիտական եւ ուսումնական աշխատանքներուն համար Գահիրէի Համալսարանին կողմէ աջակցութիւն:

Ստորագրուած այս պայմանագիրը հայերուս համար կարելոր է մանաւանդ այն պատճառով, որ պայմանագրին 2-րդ յօդուածով իրաւական հնարաւորութիւն կ'ընձեռուի արաբական ամենահեղինակաւոր համալսարանին մէջ հայերէն լեզուի ամպիոն հիմնելու, որ կը դառնայ առաջինը արաբական աշխարհին մէջ եւ որ Նպատակամղուած աշխատանք տանելու պարագային, կրնայ յետագային վերածուիլ հայագիտական ուսումնասիրութիւններու ամպիոնի:

Պայմանագրին ստորագրութենէն ետք կայացած զրոյցին ընթացքին ՀՀ Դեսպանը ու Գահիրէի Համալսարանի Նախագահը պայմանաւորուած են իրենց բոլոր ջանքերը ի գործ դնելու պայմանագրին տրամադրութիւնները լաւագոյնս իրագործելու համար:

Հանդիպման աւարտին Դեսպան Կարապետեան վերահաստատեց ԵՊՀ տնօրէն Ռ. Մարտիրոսեանի կողմէ Գահիրէի Համալսարանի Նախագահին առաքուած Հայաստան այցելելու հրաւերը:

Կը մաղթենք, որ այս յոյժ կարելոր պայմանագրին իրագործման գործընթացը ըլլայ անխափան եւ արագընթաց:

«Տ.»

Օ. Խ.

Հոս տեղին է նշել թէ, 6 Մարտ 1999 թուականին Գահիրէի ՀՀԸՄիութիւնը տեղեկանալով թէ որոշուած է Գահիրէի Համալսարանի Գրականութեան Հիմնարկէն Ներս բանալ հայերէն լեզուի բաժին մը, շնորհաւորելով առնուած որոշումը պատկան մարմնին փոխանցած էր 50.000 Ե. Ոսկիի գումար մը:



## ՄՏՈՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃՈՒՐՋՊԱՐԻՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

451 թուականի Մայիս 26-ին Աւարայրի պարտութեամբ աւարտած համաժողովրդային ճակատամարտը պարսիկներու դէմ, դարձաւ ոգեկան այն յաղթութիւնը, որուն խորհուրդով առաջնորդուած, դարերու ընթացքին յաջողեցանք պահել ու պաշտպանել մեր հաւատքը, լեզուն եւ մշակոյթը:

1915-ի Մեծ Եղեռնէն երեք տարի անց, 1918 Մայիս 22-էն 26 երկարող Սարտարապատի Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի համաժողովրդական գոյամարտերը եղան հայ ժողովուրդին միասնական ուժին այն յաղթանակը, որ պիտի կասեցնէր Օսմանեան բանակին ներխուժումը Արեւելեան Յայաստան, փրկելով այն փոքրիկ հողաշերտը, որ 1918 Մայիս 28-ին հռչակուեցաւ Անկախ Յայաստանի Յանրապետութիւն:

1375 թուականին Եգիպտոսի Մամլուքներուն կողմէ Կիլիկեան Յայկական Պետութեան անկումէն մօտ 6 դար անց, հայ ժողովուրդը կրկին կ'ունենար պետականութիւն, առաջին Անկախ Յայաստանի Յանրապետութիւնը, 20-րդ դարու հայոց պատմութեան մէջ, որուն

կեանքը սակայն, տարածաշրջանի երկիրներուն մէջ առկայ պայմաններուն հետեւանքով, երկուքուկէս տարի կը տեւէր միայն:

1920 Նոյեմբեր 29-ին, Խորհրդային բանակին մուտքով Յայաստան, Յայաստանի Անկախ Յանրապետութիւնը կը դառնար Խորհրդային Յայաստանի երկրորդ Յանրապետութիւնը 20-րդ դարու պատմութեան մէջ:

Այս երկրորդ Յանրապետութեան շրջանին է, որ հայրենիքի ժողովուրդը հակառակ խորհրդային վարչակարգին պարտադրած դժուար պայմաններուն, ժամանակակիցներու աչքին առջեւ, իրեն ընձեռուած խաղաղութեան եւ «եղբայրութեան» պայմանները կարելի եղած չափով օգտագործելով, կրցաւ իր թշուառ վիճակը թօթափելով հիմնել քաղաքներ եւ գիւղեր, զարգացնել մշակոյթ ու գիտութիւն:

Եւ սակայն, հայ ժողովուրդին կը պակսէր այն, որ ժառանգած էր իր նախահայր՝ Յայկէն: Անոր կը պակսէր ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ: Յայ ժողովուրդին կը պակսէր իր իսկ Անկախ Յանրապետութեան անունով գործելու եւ միջազգային ասպարեզ դուրս գալու ազատութիւնը:

շարունակութիւնը յաջորդ էջ

### «ՐԱՅԱՍՏԱՆԻ ՕՐ» ՄԱԱՏԻԻ ԳՐԱԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Յուլիս 27-ին Եգիպտոսի Առաջին Տիկին Սիւզան Մուպարաքի գլխաւորած Women's International Peace Movement կազմակերպութեան եւ Եգիպտոսի մէջ Յայաստանի Յանրապետութեան Դեսպանութիւնը կազմակերպած է «Յայաստանի Օր» մշակութային ձեռնարկը, որ տեղի ունեցած է Գահիրէի հարաւը գտնուող Մաատի արուարձանին մեծագոյն գրադարանին մէջ:

Ձեռնարկը կը բաղկանար երեք մասերէ:

Յայաստանի մասին վաւերագրական շարժապատկերի ներկայացում, հայկական ազգային պարերու կատարում եւ առանձին սրահի մը մէջ «Եգիպտոսը հայ մանուկներու աչքերով» խորագիրը կրող 4-15 տարեկան երեխաներու աշխատանքներու ցուցադրութիւն:

«Յայաստանի Օր» ձեռնարկին ներկայ գտնուած են Գահիրէի մէջ հաւատարմագրուած կարգ մը երկիրներու դիւանագետներ, Women's International Peace Movement կազմակերպութեան անդամներ, լրատուամիջոցներու, ինչպէս նաեւ հայ համայնքէն բազմաթիւ ներկայացուցիչներ:

Եգիպտոսի առաջին եւ արբանեակային Nile Sat ալիքները մօտ օրէն պիտի տեսասփռեն իրենց հերթական «Աշխարհը եւ Մշակոյթները» հաղորդաշարին յայտագիրը նուիրուած Յայաստանին, որուն ընթացքին պիտի անդրադառնան նաեւ սոյն ձեռնարկին:

«Տ.»



Եւ ահա 20-րդ դարու աւարտին, միջազգային քաղաքական զարգացումները եւ Խորհրդային Միութենէն ներս տեղի ունեցած եռեւեփումները ձեռնտու եղան Հայաստանի անկախութիւնը հռչակելու, եւ Վարդանանցի ու Սարտարապատի օրինակով ոտքի կանգնելով հայ ժողովուրդը իրագործեց Արցախի ազատագրումը եւ հասաւ իր երազած ազատութեան:

20-րդ դարու հայոց պատմութեան աւարտին կայացած Հայաստանի երրորդ Հանրապետութիւնը արդէն բոլորած է իր անկախութեան 15 տարիները: Հայրենի ժողովուրդը կրկին սկսած է գոյատեւելու եւ վերակառուցելու իր պայքարին: 15-ամեայ Անկախ Հայաստանի Պետութիւնը այժմ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ ապրող իր գաւակներով կը փորձէ դիմագրաւել Անկախութեան հետ ծնունդ առած անխուսափելի դժուարութիւնները ու կը վայելէ նոյն Անկախութենէն բխած բարիքները:

Այս տարի, Անկախ Պետականութեան հովանիին ներքեւ Հայրենիք-Սփիւռք միասնականութեան բարիքներէն մեծագոյնը կարելի է համարել Ապրիլեան Ցեղասպանութեան 90-ամեակին նուիրուած Միջազգային Գիտական Համաժողովը եւ Ցեղասպանութեան ճանաչումը բազմաթիւ երկիրներու կողմէ:

Այս տարի, հայոց պատմութեան մէջ իր հանգրուանային իրադարձութիւններով արդէն իսկ հարուստ Մայիս ամիսը երկու նոր, անսախառէպ իրագործումներով եւս նշանաւորուեցաւ:

Անոնցմէ առաջինը՝ Գիրերու Գիւտին 1600-ամեակին նուիրուած միջոցառումներուն եւ համաժողովրդական «Միասնական Շուրջապար»-ի ծիրէն ներս, Աշտարակէն Ապարան տանող մայրուղիին վրայ Մայիս 21-ին, աշխարհի վրայ իր նմանը չունեցող Այբուբենի «Քար-Տառերու Պուրակ»-ին բացումն էր:

Հայ վարպետներու ձեռքով քանդակուած քարէ տառերու շուրջապար բռնած յուշարձանը, ՀՀ Գլխաւոր Դատախազ Աղուան Յովսէփեանի խօսքերով, «միասնութեան խորհրդանիշ է. ՏԱՌԵՐԻՑ ԻՐԱՔԱՆՉԻՐԸ ՈՐԵՒԷ ԻՄԱՍՍ ՉԵՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ, ԵՅԷ ԴՐԱՆՔ ՄԻԱՍԻՆ ՉԵՆ»: Ան յայտնած է նաեւ, թէ կը նախատեսուի մինչեւ Արագած լեռ կառուցել յուշարձաններ եւ լեռան լանջերուն տեղադրել հայոց տառերով գրուած բոլոր կոթողային ստեղծագործութիւններուն յուշարձանները:

Երկրորդը՝ Մայիս 28-ին Արագածի լանջին կայացած համաժողովրդային Միասնական Շուրջապարն էր, որուն Հայաստանէն եւ Սփիւռքէն մասնակցեցան մօտ 400 հազար մարդ, համաձայն Երեւանի ոստիկանութեան տուեալներուն:

Շուրջապարին, որ տեւեց 15 վայրկեան, մասնակցեցան նաեւ Հայաստանի Պետական այրերը, որոնք նախագահ Ռոպերթ Քոչարեանի գլխաւորութեամբ, Սարտարապատի մէջ տեղի ունեցած տօնախմբութենէն ետք, եկած էին միանալու Շուրջապարին:

Միասնութեան Շուրջապարի տօնախմբութիւնները սկսած են Մայիս 27-ին Արագածի չորս գագաթներուն վրայ: Մի քանի փրկարար խումբերու տղոց քառագագաթ Արագած վերելքը սկսած է առաւօտեան ժամը 11.30-ին: Անոնք գագաթ հասած են գիշերը, իրենց հետ տանելով հայկական այբուբենը, 20 մեթր բարձրութեամբ հայկական դրօշակներ եւ խաչեր: Արագածի գագաթներուն վրայ հրավառութիւնը սկսած է ժամը 21.15-ին:

Միասնութեան Շուրջապարի մասնակիցներէն 300 հազար հոգի համապատասխան վկայագիր ստացած են: Շուրջապարը 3200 մ. բարձրութենէ ուղղաթիռներէ կախուած մասնագետներու կողմէ նկարահանուած է:

Մեր պատմութեան ճգնաժամային պահերուն միասնականութեամբ յաղթահարած ենք մեր լինելիութեան ճանապարհին ցցուած խոչընդոտները:

Արագած լեռան շուրջ 165 քմ. երկարութեան վրայ իր ծաւալով անսախանդէպ այս Միասնական Շուրջապարը կը յուսանք ու կը մաղթենք, որ յանգի իսկական, գործնական միասնութեան: Միասնութիւն հասկացողութեամբ, հանդուրժողութեամբ եւ ընթրումով, նախ եւ առաջ քաղաքական եւ եկեղեցական աւագանիին շրջածիրէն ներս, որուն ի տես վստահօրէն պիտի միանայ նաեւ ժողովուրդը, որպէսզի բարգաւաճի մեր երկիրը եւ բարօրութեան մէջ ապրի մեր ժողովուրդը:

Այն ատեն միայն կ'արդարանայ Միասնական Շուրջապարին կայացումը եւ գուցէ նաեւ գրանցումը Կինեսի գիրքին մէջ:

Արաքսի Տեովլէթեան



# ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ՝ ԻՐ ՍՐՔՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏՆԵՐՈՒ ՄԵՋ

Քրիստոնեության առաջին դարերուն՝ Եկեղեցին յաճախակի եւ արհեստագործական հալածանքներէ տառապած է, որովհետեւ նոր գաղափարաբանութիւնը շատ երեւոյթներով թուած է հակադիր ըլլալ ժամանակի հաւատալիքներուն ու բարքերուն, եւ այդ պատճառով ալ՝ սպառնալիք մը նկատուած է:

Այդ շրջանին իրագործուած մարտիրոսութիւնն ալ փաստած է, որ սերը Քրիստոսի հանդէպ եւ հաւատարմութիւնը անոր վարդապետութեան նկատմամբ կը ներկայացնեն գերագոյն արժէքները քրիստոնեաներուն, որոնք իրենց հաւատքը կ'ապրին արմատական կերպով:

Ժամանակի հոլովոյթով՝ աստիճանաբար, Եկեղեցին կեանքը նոր հունի մէջ մտած է եւ հաւատքի համար ապրուած պրկումն ալ մեղմացած է, երբ Հռոմի նորադարձ կայսրեր եւ աստիճանաւոր պաշտօնատարներ յարած են նոր վարդապետութեան: Գրեթէ նոյն երեւոյթը կրկնուած է Հայաստանի պարագային ալ:

Արդէն Դ. դարու սկիզբէն իսկ, հայ ժողովուրդին համար նուիրական անուն մը եղած է ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ՝ որ Հայաստանի մէջ քրիստոնեության գաղափարները տարածելով եւ հաստատելով դարձած է պատմական նշանակութիւն ունեցող երեւոյթ մը, որուն եզակի կերպարը հիմք ծառայած է բազմաբնոյթ աշխատութիւններու՝ գեղանկարչութեան, գծանկարչութեան, մետաղամշակութեան, ասեղնագործութեան, գորգագործութեան, խեցեգործութեան, դաջագործութեան, եւ փայտի գեղարուեստական փորագրութեան բնագաւառներուն մէջ:

Ահա, այսպէս է, որ ժամանակի եւ տարածութեան մէջէն յառնող կերպար մըն է *Գրիգոր Լուսաւորիչը*, որուն մէնք հաղորդակից դարձած ենք իր մասին հաղորդուած իրապատում եւ առասպելական հիմք ունեցող նկարագրութիւններով եւ յատկապէս իր անձին վերաբերող եւ մեզի հասած բիւզանդական, ռուսական եւ հայկական գեղարուեստական

մեկնաբանութիւններու «առաւել տիպական օրինակներ»-ով:


Գրիգոր Լուսաւորիչի կերպարին բազմակողմանի մեկնաբանումներէն առիւնքնուած, ընթերցողին ներկայացնելու փոյթըրած է արուեստագիտութեան դոկտոր, Մանիա Մ. Ղազարեանը, որուն անաւարտ մէկ ուսումնասիրութիւնը՝ «համեստ շարադրանք»-ի վերածելով, իր որդին Աշոտ Ստեփանեանը յաջողած է ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Գիտական Խորհուրդին որոշումով իրապարակ հանել «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ Սրբութիւն եւ Արուեստ» գեղատիպ հատորը՝ որ լոյս տեսած է Գահիրէ, 2004-ին:

Այս ինքնատիպ հատորին վերահասու ըլլալու համար, կը փորձեմ համառօտիւ ներկայացնել. աշխատանքին նպատակը՝ էջ 3-4, կը բացատրուի


- «Երկու խօսք»-ով, յետոյ մատենագիտական բազմաթիւ աղբիւրներու յիշատակութեամբ՝ էջ 5-18, կը տրուի «Սրբութեան վերածուած Պատմականը», փաստագրուած սակայն իրար հակասող տուեալներով, ապա կը յաջորդէ «Իրեղէն Սրբութիւններու Հմայքը», էջ 19-34:

Ա, Բ, Գ Մասերով կը ներկայացուին «Նմոյշներ Գրիգոր Լուսաւորիչի Պատկերագրումներէն՝ Բիւզանդական Արուեստի Համակարգին Մէջ», էջ 35-41, «Դրուագներ Գրիգոր Լուսաւորիչի Կերպարի Դրսեւորումներէն՝ Ռուսական Արուեստին Մէջ», էջ 42-49, եւ «Գրիգոր Լուսաւորիչի Տարբերակումները՝ Հայ Մշակոյթի Համակարգին Մէջ», էջ 50-131: Ընդարձակ «Ծանօթագրութիւններ»-ով՝ էջ 132-151, կը փակուի հատորը:

Պատմական արժանահաւատ յիշատակարաններու մէջ միայն յիշատակուած կը գտնենք Գրիգոր Լուսաւորիչին գործածած իրեղէն նիւթերը՝ վրանը, տերունական խորհուրդին սեղանը, աթոռը, որոնք Սուրբը իրեն հետ կը շրջեցներ նախքան սուրբերու



Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը: 1657 թ.: Էջմիածնի հաւաքածոյ:



Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը: Անթիլիաս, Կիլիկիա թանգարան:



յիշատակին եկեղեցիներ կառուցելը. իր մատանին, գօտին եւ գաւազանը՝ որոնց ներկայացուցած գեղարուեստական յատկանիշներուն մասին կարծիք չեն կրցած յայտնել արուեստաբանները:

Իսկ Գրիգոր Լուսաւորիչին կերպարը ներկայացուած է Սուրբին մարմնական մասունքներով, յատկապէս աչք բազուկին եւ ձեռքին նմանակումով պահպանուած արծաթեայ կամ ոսկեգօծ պահարան-տուփերով, որոնք հայկական կիրառական արուեստին ինքնատիպ նմոյշներէն կը համարուին:\*

Եթէ ներելի է մատանիչ ընել, հաւանաբար խմբագրական անուշադրութեան (խմբագիր պ. Գ. Թ. Պ. Ա. Չոբանեան) արդիւնք պէտք է նկատել հետեւեալ վրիպումները:

Էջ 9, Մանեաց փոխան՝ Մանեայ

Էջ 16, անտարանիչները փոխան՝ առաքեալները

Էջ 19, սրբերի շարքը դասուած որդու Գրիգորիսի փոխան՝ թոռան

Էջ 32, վարի երեք տողերը կրկնուած են յաջորդ

էջն ալ

Էջ 53, 54 Յովսէփ Յարեմաթացի փոխան՝ Արիմաթացի

Էջ 62 Կոնստանդին փոխան՝ Կոստանդին

Էջ 84 Չմառ փոխան՝ Չմառ

Էջ 142 Sirarpy Der Nersisian փոխան՝ Sirarpie Der Nersessian

Լաւորակ թուղթով լոյս տեսած 152 էջնոց այս հատորը ճոխացած է 7 սեւ-ճերմակ եւ 22 գունաւոր նկարներով՝ որոնք ներկայացուող ուսումնասիրութիւնը մատչելի եւ ցայտուն կը դարձնեն:

Յիշատակութեան մասնաւոր պարագայ մըն է նաեւ, որ այս գիրքը իրենց ծնողներու յաւերժ յիշատակին ձօնած են Պերճ եւ Սեդա Թերզեանները \*\*, արդէն տպագրութիւնն ալ իրագործուած է Ալմաթա՛ա ալ Աֆրիքիայի մէջ:

Տիգրան Գեորգեան

\* Չետաքըքուողին համար կ'ուզեմ յաւելել յիշատակելի թէ Լեջէի Յամալսարանին կողմէ 2001-ին կազմակերպուած «San Gregorio armeno e il suo culto nell'Italia meridionale» գիտաժողովին, Ֆրեզուոյի Յամալսարանէն փրոֆ. Տիգրան Գույումճեան ներկայացուցած է «Սբ. Գրիգոր Լուսաւորիչի Յայկական Պատկերագրութիւնը» հետաքըքուական ուսումնասիրութիւնը՝ ուր յայտնած է, թէ իր յարատեւ հետազօտութեան շնորհիւ յայտնաբերած է նաեւ ցարդ անծանօթ մնացած երկու աջեր ալ:

\*\* Յաւանաբար շատ քիչերու ծանօթ է, թէ մեկենաս ամուր՝ 2001 թ., Գրիչ եւ Օաղկող Աստղիկ Գեորգեանի կազմած 38 էջնոց գողտրիկ ՕՄՂԿԱԲԱՂ ՍԱՂՄՈՍՆԵՐԸ՝ «Որպէս Անթառամ Օաղիկ» դարձեալ իրենց ծնողներու յաւերժ յիշատակին ձօնած էին:

Մանրամասնութեան համար տեսել՝ «Տեղեկատու» Պաշտօնաթերթ, Յոկտեմբեր 2001, թ. 21, էջ 26-27:



Գրիգոր Լուսաւորիչ: Լուսանցագարդ, 1325 թ.: Մատենադարան, ձեռ. 10439:



Ս. Գրիգոր Լուսաւորիչ: ԺԸ. դ., Անյայտ նկարիչ: Էջմիածնի հաւաքածոյ:



Մասունքի Պահարան, 1300 թ.: Խոտակերպ Ս. Նշան վանք: Էջմիածնի հաւաքածոյ:





# Թ. - ԺԵ. ԴԱՐԵՐՈՒ ԱՆԱՆՈՒՆ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՀՀ Կառավարության առընթեր Հին Ձեռագրերու Ինստիտուտի՝ Մաշտոցի անուան Մատենադարանի առաջ գիտաշխատողներէն Աստղիկ Գեորգեան իրապէս եղած է առանձնաշնորհեալ անձ մը, որ տարիներ շարունակ հասապագօրեայ արուեստագիտական մեղուաջան աշխատանքով տեսած եւ շօշափած է ծաղկեալ եւ մանրանկարեալ բիւրաւոր մատեաններ՝ ապրելով անոնց պարգեւած անկրկնելի բերկրանքը:

Արդէն տասնամեակներէ ի վեր, արուեստաբան Աստղիկ Գեորգեան իր գիտական ուսումնասիրութիւններուն առարկան դարձուցած է միջնադարեան արուեստի ճիւղերէն՝ մատենական գեղանկարչութիւնը, որուն մասին գրած բազմաթիւ եւ բազմաբնոյթ յօդուածները լոյս տեսած են հայագիտական եւ արուեստի պարբերական մամուլին մէջ. ատոնցմէ զատ հրատարակած է երկու թեմատիկ ալպոմներ. «Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում», «Հայաստան» Հրատարակչութիւն, Երեւան, 1978, 155 էջ: «Հայկական Մանրանկարչութիւն. Դիմանկար», «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, Երեւան, 1982, 246 էջ:

Տարիներու ընթացքին իր ուսումնասիրած բոլոր մանրանկարներուն գիտական դասաւորումով եւ օգտագործած գրականութեան ամփոփումով, Աստղիկ Գեորգեան իրապարակ հանեց «ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐ, Մատենագիտութիւն, IX-XIX դդ.» 822 էջերէ բաղկացած փառաւոր հատորը, որ լոյս տեսաւ Գահիրէի մէջ, 1998-ին:

Կարելի է ըսել՝ թէ քիչ մը անհարկի ձգձգումով, միայն վերջերս հրապարակ ելած է լոյն արուեստաբանին «ԱՆԱՆՈՒՆ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐ, Մատենագիտութիւն, IX-XVII դդ.» յոգնաջան աշխատասիրութիւնն ալ, նկատի ունենալով՝ որ անանուն ծաղկողներուն մէջ ալ «մասնագիտական ուշադրութեան արժանի վարպետներ» կան:

685 էջերէ բաղկացած այս երկրորդ հատորն ալ՝ նախորդին նման տպագրութեան յանձնուած է Մաշտոցի անուան Մատենադարանի Գիտական Խորհուրդին որոշումով, եւ տպագրութեան արժանացած է Գահիրէի ՀԲԸՄ-ի «Մաթենիկ Ճ. Չագըր» Հիմնադրամի միջոցներով՝ Նուպար Տպագրատան մէջ, այս անգամ լաւորակ թուղթի վրայ, եւ անբաղդատելիօրէն ինամեալ տպագրութեամբ:


Եթէ համբերութեամբ փորձենք, թռչնաթիռ ակնարկով մը կարելի պիտի ըլլայ ծանօթանալ հատորին 903 ձեռագիրներուն եւ անոնց 407 գունազարդ մանրանկարներուն մատենագիտութեան:

Հայրենի եզերքէն եւ Կիլիկիայէն դուրս ալ, հայ մանրանկարչական արուեստը իր հետեւողական զարգացումը ունեցած է նաեւ գաղթածախներու գրչատուներուն մէջ. այսպէս՝ Վենետիկ, Պոլոնիա, Հռոմ, Փերուճիա եւ այլ քաղաքներ:

Կ. Պոլսոյ Սուլու Մանաստըրի Ս. Գեորգ եկեղեցիին կից գրչատան մէջ օրինակուած ու նկարազարդուած են ձեռագրեր՝ որոնց գաղափար օրինակները եղած են կիլիկեան: Նոյնպէս Ս. Սարգիս եկեղեցիին կից գրչատանը գրուած են բազմաթիւ ձեռագրեր՝ որոնք մէկ մէկ բարեբախտաբար հանգրուանած են Մատենադարանը:

Հայերու առաջին մեծ գաղթը դեպի Պարսկաստան տեղի ունեցած է սելճուքեան արշաւանքներուն ժամանակ՝ 1048-ին, երբ հայեր հաստատուած են Թաւրիզի եւ Սուլթանիայի մէջ, ուր յատկապէս ստեղծագործած է գրիչ եւ նկարիչ Աւագը եւ անոր աշակերտներէն՝ Մխիթար Անեցիին:

Շահ Աբասի բռնագաղթէն յետոյ, ԺԵ. դարուն լոր Ջուղան կը դառնայ հայ մշակոյթի կարեւոր կեդրոններէն մէկը. 1605-ին կը հիմնուի Ս. Ամենափրկիչ վանքը, որուն կից Խաչատուր Կեսարացի վարդապետը կը հիմնէ գրչատուն մը՝ ուր





մանրանկարչական արուեստը կը զարգանայ հայաստանեան, կիլիկեան եւ մասամբ երոպական պատկերագրութիւններու համատեղումով:

ԺԴ. դարու 40-ական թուականներէն սկսեալ, Դրիմի Կաֆա, Սուրխաթ, Սուղդա եւ այլ վայրերու մէջ գրչութեան կեդրոններ կը կազմուին, երբ մոնկոլական բռնութիւններէն հալածուած անեցիներ, Մեծ Հայքի այլ վայրեր տեղահան եղած մեծ թիւով հայեր եւ պետականութիւնը կորսնցուցած կիլիկեցի հայեր կը կազմեն նոր գաղթավայրին կորիզը:

Կիպրոսն ալ գրչութեան կեդրոն մը եղած է, երբ հայերը գացած հաստատուած են Կիլիկիոյ հայկական թագաւորութեան անկումէն ետք:

Նկարագարդ ձեռագրեր ստեղծագործուած են նաեւ Վրաստանի հայկական գրչատուններուն մէջ, մանաւանդ ԺԵ. – ԺԷ. դարերուն՝ Տփղիսի մէջ:

Պէտք է մատնանշել մասնաւորաբար, որ գաղթօճախներու գրչատուններուն մէջ ստեղ-

ծագործուած մատեանները՝ կանոնիկ պատկերագրութենէն զատ կը բովանդակեն պարականոն նկարներ ալ:

Գիտական հանդերձանքը կը դիրացնէ այս Մատենագիտութեան օգտագործումը. Թեմատիկ նկարներու ցանկը, Դիմանկարները՝ Մշակոյթի գործիչներ, Ճգնաւորներ եւ անապատականներ, նահատակներ, զօրավարներ, բժիշկներ, նկարագարդ պատառիկներ, նկարագարդ պահպանակներ, Տեղանուններու ցանկ, Օգտագործուած Ձեռագրեր. ինչպէս նաեւ յայտնի ծաղկողներէ նորայայտ ձեռագրեր:

Շատ լաւ պիտի ըլլար, եթէ այս պատկառելի հատորը գերծ մնար քանի մը անախորժ վրէպներէ, ինչպէս՝ էջ 6 Ստամպօլց, էջ 9 Մաթեոս, էջ 17 ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Այս յոգնասպառ աշխատասիրութեան համար՝ կարելի է միայն խնդակից ըլլալ արուեստաբան Աստղիկ Գերգեանին:

Տիգրան Գերգեան



Էջմիածնի Աւետարան, 989 թ.:



Մատուց Աստուածաշունչի, 1270 թ.:



Աստուածաշունչ, ԺԷ. դ.:



# ԳԱՆՏՐԵԻ ԴԲԸՄ-Ի ԾԻԱԾԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԸԱՄԵՐԳՈ

Պարտեզիս մեջ վարդեր կան,  
Շուրջս դարձող անձեր կան,  
Ես իմ եարս ընտրեցի,  
Մեզի նախանձողներ շատ կան:

Այդ օր, Պլըքտանեան հանդիսասրահի մուտքին, ժպտերես աղջիկներ իւրաքանչիւր իգական սեռի ներկայացուցիչի նուիրեցին գունաւոր վարդեր, որոնց վրայ դրօշակի նման կը ծածաներ այն թղթիկը, որուն վրայ գրուած էր վերոնշեալ քառեակին նման իւրաքանչիւրին վիճակուած բախտորոշ տողեր:



Այդ օրը Համբարձման յաջորդող Կիրակին էր, իսկ առիթը՝ ՀԲԸՄիութեան 2004 թուականի Յուլիսին ծնունդ առած, 6-12 տարեկան մանուկներու Ծիածան երգչախումբին անդրանիկ համերգը նուիրուած՝ Համբարձման տօնին:

«Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահ Յոգեշնորի Հայր Սուրբ

Արժանապատիւ Տէր Հայր

Պատկառելի Թեմական Ժողովի յարգարժան Ատենապետ

Պատուարժան Քաղաքական Ժողովի եւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ.

Սիրելի ներկաներ,

Քանի մը վայրկեանէն պիտի ունկնդրէք Գահիրէի ՀԲԸՄ-ի նորակազմ «Ծիածան» երգչախումբը:

ՀԲԸՄ-ի գլխաւոր նպատակներէն է պահպանումը եւ յաւերժացումը հայ ինքնութեան եւ ժառանգութեան եւ այս աշխատանքը կը տարուի հայ մշակոյթի տարածումով բոլոր հայ գաղութներէն ներս»:

ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Վարչութեան օժանդակ անդամուի տիկին Թալին Երզնկացեան այս խօսքերով կը կատարէր բա-

ցումը համերգին, որ տեղի ունեցաւ Կիրակի, 15 Մայիս 2005-ի երեկոյեան ժամը 7.30-ին, ու կը շարունակէր շեշտելով, «փոքրիկներու մօտ հայկական ինքնութեան հաստատման եւ զարգացման ամենահաճելի եւ տպաւորիչ միջոցներէն մէկն է հայ երգի ու երաժշտութեան ուսուցումը:

Անցեալին, տարիներ շարունակ Գահիրէի ՀԲԸՄ-ը ունեցած է «Կռունկ» երիտասարդական երգչախումբը, որը դադրած է, իր ղեկավարին երկրէս մեկնումին պատճառով:

Ներկայիս, օգտուելով Սօ. Միհրան Ղազէլեանի եւ տիկին Գոհար Ղազէլեանի Եգիպտոս գտնուելու առիթէն, Գահիրէի ՀԲԸՄ-ը կրկին ձեռնարկեց երգչախումբի մը կազմութեան, այս անգամ փոքրիկներու երգչախումբ մը «Ծիածան» անունով, որ այսօր ելոյթ պիտի ունենայ իր առանձին անդրանիկ համերգով, ու համբարձման տօնին առթիւ պիտի ներկայացնէ փունջ մը երգեր»:

Բեմին խորքին ծիածանի պարեգօտը գրկած էր կարծես Արարատի ձիւնափայլ գոյգ գագաթները:



<b>ՅԱՅՏԱԳԻՐ</b>		<b>ԾԻԱԾԱՆ ՄԱՆՈՒԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ԱՆՊԱՆԵՐ</b>
Գամբարձում եայլա	Երաժշտ. Արմեն Տիգրանեան	Ասփե Ճիգմեճեան
Գաբում է, սիրուն է	Երաժշտ. Դանիել Դազարեան	Արեգ Արզարեան
Աճալի տակից	Երաժշտ. Արմեն Տիգրանեան	Գաթրին Իրատեան
Վիճակի երգ	Երաժշտ. Ժողովրդական	Լորիկ Տրդատեան
Խոստոստ	Երաժշտ. Տիգրան Մամուլբեան	Լուսաճին Դազեյեան
Շուշան	Երաժշտ. Ա. Մամուլեան	Ճուլիա Աւանեան
Քրիզանթեմ	Երաժշտ. Արեգ Լուսինեան	Մանե Ճիգմեճեան
Լալա	Երաժշտ. Ռոմանոս Մելիքեան	Մարիան Աբիկեան
Մամուշակ		Ռաֆֆի Սուլթանեան
Կրկեսիմ մէջ	Երաժշտ. Ա. Ազմարեան	Ռոքսան Զեհիայեան
Յաներժահարսեր	Երաժշտ. Ա. Մամուլեան	Ռուբեն Սաատ
Ծաղրածու	Երաժշտ. Ատեփան	Ռուբինա Սաատ
	Պապաթորոսեան	Սիլվա Պաթանի
		Վարդան Թերզիպաշեան
		Փաթիլ Պաթանի
		Քրիս Գլլոյեան

Ծիածանի եօթ գոյներու ծաղիկներով ու կարկաչուն աղբիւրով «Եայլա»-ի վերածուած էր բեմահարթակը, ուր նոյնպէս ծիածանի եօթ գոյներով զուգուած ու ծաղիկներով պսակուած թիթեռնականման 16 մանուկներ մուտք գործեցին:

Պարմանուհի Ռիթա Չաքարեան սահուն ընթերցանութեամբ տեղեկութիւններ տուաւ Զամբարձման տօնին եւ անոր հետ առընչուող վիճակ հանելու ժողովրդական աւանդական ծիսակատարութեան մասին:

Հնչեց յայտագրին առաջին երգը:

Զամբարձում եկաւ, ծաղկունքը ալուան  
 Չուգել ես հանդեր նախշուն գորգերով:  
 Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան  
 Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

Զամբարձում, Եայլա,  
 Եայլա ջան, Եայլա,  
 Սեւ սարեր, Եայլա,  
 Եայլա ջան, Եայլա:

Յովհաննէս Թումանեանի «Անուշ» պոեմէն Արմեն Տիգրանեանի երաժշտութեամբ թելեր առած այս տողերը, խմբավար Միհրան Դազեյեանի կախարդական ճպոտով հասած էին

Ծիածանի մանուկներուն ու անոնց շուրթներով հանդիսատեսին, ուրախութեամբ թրթռացնելով անոնց հոգիները:

Ծիածան մանուկներու երգչախումբը ղեկավարութեամբ Մօ. Միհրան եւ Գոհար Դազեյեաններու, դաշնակի ընկերակցութեամբ տիկին Նանօր Աբիկեանի, անկախ Զամբարձման տօնակատարութեան յատուկ երգերէն, ներկայացուցին մանկական երգերու եւ ծաղիկներու նուիրուած երգերու փունջ մը, որ ի հարկ է աղերս ուներ գարնան եւ Զամբարձման տօնի վիճակի արարողութեան հետ:

Մանուկները բոլոր երգերը կատարեցին մեծ խանդավառութեամբ: Չգալի էր մեծամասնութեան ուշադրութեամբ հետեւիլը ղեկավարներուն ձեռքի շարժումներուն, նաեւ երգերուն բառերուն համապատասխան շարժումներու կատարումը:

Նոյնքան մեծ էր խանդավառութիւնը ժողովուրդին, մանաւանդ երբ սկսաւ վիճակահանութեան աւանդական ծիսակատարութիւնը:

Ծիածանի աղջիկները բեմին ձախին այս առթիւ տիար Սաատ Նակիպի կողմէ կառուցուած աղբիւրին կլկլացող ջուրէն լեցուցին իրենց սափորները, հաւաքեցին գունաւոր ծաղիկներ եւ զանոնք լեցուցին յատուկ կարասի մը մէջ, ուր նախապէս դրած էին վիճակին մաս-



Նակիցներուն պատկանող այլազան իրեր:

Բեմ ելաւ սպիտակագգեստ, երեսը քողով ծածկուած փոքրիկ աղջնակ մը եւ երգերու ուղեկցութեամբ կարգով սկսաւ սափորէն հանել առարկայ մը, որուն տիրոջ համար կը կարդացուէր բարեմաղթանք մը, ինչպէս՝

Տունիս ետեւը ձոր է,  
Այս ինչ գեղեցիկ օր է,  
Վիճակ հանենք միատեղ,  
Նայինք բախտաւորն ո՞վ է:  
Եւ կամ  
Մարութայ սարը մշուշ է,  
Ճամբան ալ քար ու փուշ է,  
Ձեռքես բռնէ Տիրամայր,  
Մուրը իջաւ, շատ ուշ է:

Եւ այսպէս Ծիածանի բոլոր անդամներուն վիճակը քաշուեցաւ այդ օր:

Վիճակով իրենց բաժին ինկած բարեմաղթութիւններու կողքին անոնք այդ օր իրենց հետ տարին Նաեւ Ներկաներուն սերն ու գնահատանքի արտայայտութիւնները:

ՀԲԸՄ-ի Ծիածան Մանկական Երգչախումբին անդրանիկ ելոյթը արդարացուց սիրով տարուած անշահախնդիր աշխատանքը իրենց առաքելութեանը գիտակից Մօ. Միհրան Ղազէլեանի եւ տիկին Գոհար Ղազէլեանի, որոնց միացաւ դաշնակահարուհի Նանօր Աբիկեան:

Հանդիսութեան կայացման առընթեր աշխատանքներն ու բեմայարդարումը սիրալուծարօրէն կատարած էին տիկիններ Ալին Ճիգմեճեանը, Նանօր Աբիկեանը, Քարոլին Արսլանեանը եւ տիար Սաատ Նակիպ:

Թող ուրախ զգան եւ հպարտ Գահիրէի ՀԲԸՄ-ի պատասխանատուները, որ ՀԲԸՄիութեան 100-ամեայ պատմութեան այս ժամանակաշրջանին, երբ առաւելաբար Սփիւռքի մէջ յետ քայլ կ'ընեն հայերէն լեզուի ուսուցումը ու կրթական աշխատանքն ու աւանդութիւններու կիրարկումը, իրենք, հաւատարիմ իրենց Միութեան գլխաւոր նպատակներուն, ճիգ չեն ինսայեր ժամանակին, վայրին եւ կարելիութիւններու սահմաններուն մէջ, կատարել այն ամէնը որ կը նպաստէ մէկ քայլ առաջ տանելու Միութեան ազգապահպանման նպատակը:

Թող ուրախ եւ հպարտ զգան Մօ. եւ տիկին Ղազէլեանները, որ լոյն այդ երգով ու երաժշտութեամբ, անոնք Նաեւ հայկական աւանդութիւններով կը սնուցանեն մեր երեխաները եւ կը հարստացնեն զանոնք յուշերով ու յիշատակներով:

Կ'անցնին տարիները եւ երբ Ծիածանի մանուկները կ'ըլլան սպիտակահեր մեծ մայրեր ու մեծ հայրեր ու կը հանդիպին իրար, վստահ եմ որ անոնք կը մտաբերեն իրենց անդրանիկ այս ելոյթը ու հարց կու տան իրարու կը յիշե՞ս երբ առաջին անգամ ...

Խաղաղ երթ Ծիածանին:

Արաքսի Տօվլէթեան



Պարմանուհի Ռիթա Չաքարեան եւ վիճակ քաշող Փերլա Աւանեան:



## ՎԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՕ. ՄԻՐՈՒՆ ՂԱԶԷԼԵԱՆԻ ՐԵՏ

*Հ. Երբ Գահիրեի Ազ․ային Իշխանութենէն հրաւեր սրացաք Եփպրոսի մէջ աշխատելու, ի՞նչ էր ձեր առաջին անդրադարձը, եւ ինչպէ՞ս կը պատկերացնէիք եփպրոսի տարրերը:*



Պ. Իւրաքանչիւր ոք, քանի դեռ երիտասարդ է կամ յոնէ ինքզինք այդպէս կը զայ, միշտ ալ կը սիրէ այնպէս կողովել իր համար նոր ու անծանօթ աշխարհներ «բացայայտելու» ամէն մէկ կարելիութեամբ: Ես ալ մարդկային այդ «տեսակին» մաս կազմողի պատրաստակամութեամբ արձանագի Գահիրեի Ազ․ային Իշխանութեան աշխատանքային հրաւերին: Ձիս յատկապէս ուշադրած է, այն, որ անձն անծանօթ էր հրաւիրող կողմին եւ ես զիրենք չէի ճանչնար, հետեւաբար ծանօթութիւններէ բխող ոչ մէկ բարոյական պարտաւորութիւն կը ճնշէր մեզ՝ փոխադարձաբար: Աշխատանքային այս առաջարկին համաձայնութեան անվերապահութիւնը վստահաբար ենթադրուածն էր նաեւ այն բոլոր կուտակումներէն, որոնք դրոշմուած էին իմ մէջ եփպրոսի համարժեք պանծացնող այնպիսի բացառիկ դէպքերէ ինչպէս Գոհար Գասպարեան, Սարուխան, Յակոբ Յակոբեան, Նուպար Փաշա եւ այլն:

*Հ. Վարտահ ենք, որ երբ հոս հասաք, զանազան դժուարութիւններու հանդիպեցաք կամ յուսախաբութիւններ ունեցաք ... որո՞նք են:*

Պ. Դժուարութիւնները կեանքի աղմուկն են եւ փախչիլ դժուարութիւնները կը նշանակէ, կամաւորաբար կորսնցնել դրականը՝ նահատելու չափանիշը: Իսկ ինչ կը վերաբերի յուսախաբութիւններ ապրած ըլլալու ձեր վստահութեան՝ ստիպուած եմ հիասթափեցնել ... Ուրիշներու եւ սեփական կեանքի փորձը սորվեցուցած է, որ հիասթափութիւններ կ'ապրին անոնք, որոնք իրենք-զիրենք կը սնեն չարդարացուած յոյսերով:

*Հ. Ձեր լիբանանեան ծառայութեան մասնաճիւղի մասին ինչպէ՞ս կը յիշուի Ձեր կողմէն:*

Պ. Սարդ արարածը անշուշտ կը ձեւաւորուի նախ

իր ծինային ժառանգականութեամբ եւ ապա իր միջավայրով, մասնաւորապէս մանկական տարիներու միջավայրին ազդեցութեամբ: Մանկութեան տարիներէս երազային յիշողութիւններ (երաժշտականը նոյնպէս) անշուշտ Լիբանանին կը վերաբերին: Սակայն երաժշտութեամբ զբաղուելու երազանքս (ուսման իմաստով) իրականութեան վերածելու կարելիութիւնները իմ առջեւ բացուեցան շնորհիւ Յայաստանի հաստատուելու ծնողքիս առած վճռորոշ քայլին, քայլ մը, որ Յայաստանի նախաանկախական տարիներուն շատ ու շատ սփիւռքահայերու աչքին տարակուսելի կը թուար ...

*Հ. Կրնա՞նք ծանօթանալ ձեր ուսումնառութեան ընթացքին եւ վարած պաշտօններուն:*

Պ. Աւարտած եմ Երեւանի Ռոմանոս Մելիքեան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժինը, ապա Երեւանի Կոմիտաս երաժշտանոցի խմբավարական եւ երաժշտափոստական բաժինները, ինչպէս նաեւ խմբավարական բաժնի մասնափոստումը՝ ասբիւրանթուրան, որը կը համապատասխանէ արտասիւստի տոքթորային: Աշխատած եմ որպէս երաժշտութեան ղեկավար եւ խմբավարութեան դասախօս: Ղեկավարած եմ «Հայկակ» մանկական երաժշտութեան խմբակը, «Թարմանչաց» սիրողական երաժշտութեան խմբակը, «Յայաստան» հոփ-թոփ երաժշտութեան խմբակը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երաժշտութեան խմբակը, Ռ. Մելիքեան ուսումնարանի երաժշտութեան խմբակը, նոյն հաստատութեան մէջ դասաւանդած եմ խմբավարութիւն առարկան եւ պաշտօնավարած որպէս բաժնի վարիչ:

*Հ. Հայկակի մասին ինչպէ՞ս կը յիշուի Ձեր կողմէն:*

Պ. Պատեհութիւնը ունեցած եմ երկու տարի (մինչեւ հոս ալ) նոյն այս պաշտօնով պատասխանատուութիւններ ստանձնել Թեհրանի թեմէններու: Պարսկահայութիւնը, որ մեծաւ մասամբ կը



ներկայացնէ Հարաւ-Արեւելեան Պատմական Հայաստանի բնակչութիւնը, ինչպէս նաեւ Շահ Աբբասեան բռնա-աղթէն յառաջացած Նոր Ջուղայի բնակչութիւնը, իր քանակով ու որակով իւրայատուկ եւ շատ կարեւոր ուժ եւ արժէք է: Ազ-ային դիմա իծը պահելու պարսկահայութեան կեցուածքը որեւէ հայկական աղութի համար ուսանելի կրնայ ըլլալ հայախօսութեան իր կառաւարդութեամբ եւ խառն ամուսնութիւններու ի սպառ բացակայութեամբ:

Թեհրանեան երկամեայ աշխատանքս եր-չախմբասէր երիտասարդութեան բաւարար քանակի (քաղաքի հայութիւնը մօտ 60-65 հազար կը հաշուուի), ինչպէս նաեւ եր-չախմբային յոյսեւող աւանդոյթներու շնորհիւ արդիւնաւորութեամբ շուրջ 40 համեր-մերով եւ աւելի քան 100 խմբեր-ային ստեղծա-ործութիւններու կատարումներով:

Կարճատեւ կամ համեմատաբար երկարա-ժամկետ այցելութիւնները տարբեր հայկական աղութներ ինծի համար նաեւ կը նշանակեն վերստին ծանօթանալ հայ մարդուն, որ կը ներկայացնէ մեր պատմական հայրենիքի որոշ շրջանի մը դէմքը իր բնակութեան նոր եւ անխուսափելիօրէն ժամանակաւոր բնակավայրի անխուսափելի ազդեցութիւններով:

*Հ. Ինչ է չեր կարծիքը մեր վարժարաններէն ներս արուեստա-իւրական միութեան ուսուց-ման մասին:*

Պ. Քսաներորդ դարը եւ անոր յաջորդածը առաւել եւս կեանքի տենդա ին լարուածութիւն մը ստեղծած է ամբողջ աշխարհի վրայ: Այդ վազքէն ոչինչ կրնայ մեկուսացուիլ, ի մասնաւորի դպրոցը, որը խնդիր ունի ճիշտ այդ հեւքոտ կեանքը դիմա-րաւող անձեր պատրաստելու: Ասոր եթէ աւելցնենք նաեւ հայ սփիւռքեան դրպրոցի ազ-ային պարտաւորութիւնները՝ արտայայտուած դասապահերու տեսքով, ինքն տեղ չեն թողուր երաժշտութիւնը քիչ մը աւելի մասնա-իտական հեռանկարով դասաւանդելու հայ դպրոցներէն ներս: Եր ի դասին ոչ քննական առարկայ ըլլալու հան-ամանքը կը ջլատէ աշակերտին բաւարար լրջութեամբ անոր վերաբերելու մղումը, իսկ շաբաթական մէկ դասապահը հազիւ կը հերիքէ դպրոցական հանդէսներու փոքրիկ եր-ացանկ մը կազմել: Մինչդեռ վերջինիս որակական կողմի բարելաւումը կախուած է աշակերտի լսողական կարողութիւնները զար-ացնող սովֆեժի, եր-չա-յին ունակութիւնները բարելաւող ծայնամարզութեան, Վերաբերուողական ճաշակը յղկող դասա-կան երաժշտութեան բազմաքանակ միութեան շարունակական ունկնդրումներով ու վերլուծու-

թիւններով:

Միայն համապարփակ աշխատանքով կրնայ պատրաստուիլ լուրջ երաժշտութիւնը՝ նահա-տող եւ իր առօրեային մաս համարող աշակեր-տութիւն, որ յետ դպրոցական կեանքին մէջ ալ ուզէ չբաժնուիլ անկէ: Ինչպէս յայտնի եր-ին բա-ռերը կ'ըսեն:

«Արուեստով լի օրը համեստ  
Թանկ է քան դարը մի անարուեստ»:

*Հ. Ինչպէ՞ս կը բացատրէք երիտասարդ տարրերու պակասը եր-չախումբերուն մէջ:*

Պ. Այսօր Գահիրէի հայ աղութը, բացի զոյ-դպրոցներու, մանկապարտէզներու եւ կիրակ-նօրեայ վարժարանի եր-չախումբերէն, ունի ՀԲ-ԸՄ-ի Ծիածան մանկական եր-չախումբը, Յու-սաբերի Ծաղկաստան մանկական եր-չախումբը, Գրի-որ Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ Ներսէս Շնորհալի եր-չախումբը եւ Ազ-ային Առաջնորդա-րանի Արաքս եր-չախումբը:

Վերջինս այն կառոյցն է որ չի պարտադրեր տարիքային սահմանափակութիւն՝ մանկական չէ, եկեղեցւոյ եր-չախումբ չըլլալով չունի եր-ացանկի կրօնական պարտադրանք: Փաստօրէն ան միակ եր-չախումբն է, որ կրնայ ընդ-րկել յետ-պատանեկան տարիքէն մինչեւ բեմական պա-հանջները բաւարարող ամենաբարձր տարիքի անձեր՝ ոճական այլազան նախասիրութիւններով:

Եւ այսօր Արաքս եր-չախումբի 70 տոկոսը իր կեանքի 30-ականներու ջուրերուն մէջ նաւարկող անձերն է կը բաղկանայ: Ուրեմն՝ մտածել թէ երի-տասարդները եր-չախումբերուն չեն մասնակցիր պիտի նշանակէր երիտասարդութեան տարիքը ամփոփել յետպատանեկանէն մինչեւ 29 տարե-կանի միջեւ: Չեն կարծեր, որ այդ մօտեցումը ար-դար է 30-ամեայ երիտասարդներուն համար:

Եր-չախումբերու տեսակները կրնան ըլլալ ման-կական (ծայնային իւրայատկութիւնները նկատի ունենալով), արական, ի-ական, երկսեռ, բայց ոչ երբեք քսան տարեկանական, քառասուն տարե-կանական, ծերական կամ երիտասարդական եւ-այլն: Ինչպէս կը տեսնէք՝ համապատասխան եզ-րաբանութիւն ան-ամ չիկայ նման տարօրինակ եր-չախմբային տարբերակումներ սահմանելու համար:

Եր-չախումբի անդամը երաժշտական համա-պատասխան կարելիութիւններով եւ ճիշտ կրթութեան շնորհիւ ձեւաւորուած բարձրաճա-շակ անձնաւորութիւնն է:

Ներ-րաւուածութեան իմաստով ըստ իս իսկա-պէս տարիքային բաց մը կայ անշուշտ եր-չա-խումբերէն ներս, այսօր, որը փաստօրէն յետ



Հայկ Սար իսեանական սերունդն է:

*Հ. Արդեօք ունի՞ք առաջարկներ որոնցմով կրնաք երկիրասարդութիւնը ներփառել եկեղեցւոյ երփախումբին մէջ:*

Պ. 8. Երիտասարդութիւնը անշուշտ նախ պէտք է կարենալ եկեղեցի՝ բերել: Ընդհանրապէս եկեղեցիները կը լեցուին ոչ թէ երփախումբի մասնակցողներուն թիւի հաշուին, այլ ընդհակառակը, երփախումբերը կը կազմալրուին եկեղեցի յաճախողներու թիւէն: Եկեղեցւոյ երփախումբերուն մէջ երիտասարդութեան պակասի խնդիրը կայ ի հարկէ, բայց ան ո՛չ աղութային եւ ո՛չ ալ հայկական է: Ի սկզբանէ իրենց հայեացքը եկեղեցիին առաւելապէս ուղղած են անոնք, որոնք ունեցած են հոռով աղքատ ըլլալու փտակցութիւն եւ անոնք որոնք իրենց երիտասարդութիւնը շատոնց յանձնած են անցեալին:

*Հ. Ի՞նչ կը փափաքէիք կատարել Եփախումբի մէջ, բայց պայմանները չեն ներեր:*

Պ. Եփախումբ կամ որեւէ այլ տեղ միշտ նախընտրած են կեդրոնաձայն այն բանին վրայ թէ ինչ կրնամ ընել, իսկ «ինչ կը փափաքէի, բայց չեմ կրնարի» աղափարն անամ (անկախ «չեմ կրնարի» իրական պատճառներէն) աւելորդ ու անիմաստ բեռ մըն է, որը շալկելու ոչ ժամանակը ունիմ եւ ոչ ալ ցանկութիւնը:

Երփախումբային արուեստը, ի տարբերութիւն կատարողական միւս ձեւերուն, իր ետին կ'ենթադրէ երաժշտապէս կրթուած ու բարձրաճաշակ մարդկանց խումբ մը, որ երաժշտական իր կարողութիւններուն կողքին ունենայ ու սիրէ ործել միական, միաբերան, միատեղ: Յատկապէս հայ մարդու համար անհրաժեշտ եւ միաբանութեան շատ ուսանելի փորձառութիւններ պարունակող արուեստի այս տեսակը առաւել կիրառական դարձնելու նպատակը կ'ընկալեն իբրեւ Երիւրդի: Իսկ պայմաններ ստեղծողները, կասկած չունիմ, աւելի քան պատրաստական են աջակցելու այդ առթիւ մեր ամէն մէկ ործնական նախաձեռնութեան:

*Հ. Գալով Ծիածան մանկական երփախումբի համերփն, ինչո՞ւ զարեցիք այդ նիւթը եւ ինչպէ՞ս պատրաստեցիք բոլոր րութիւնները:*

Պ. Նախ կը շնորհաւորեմ Ծիածան երփախումբի բոլոր անդամները, մեծապէս կը նահատեն զիրենք եւ մասնաւորաբար անոնց ծնողքը, քանի որ անոնց կուրծքերուն տակ կը բաբախեն երփախումբային արուեստի հմայքով Երուած սիրտեր եւ

կը թեւածեն հայեցի կրթութեան ամէն մէկ պատեհութիւնը ործածել փոցողի անխոնջ հոփներ:

Ծիածանի այս առաջին ամբողջական ու առանձին համերփը նուիրուած էր համբարձման տօնի ժողովրդական կողմին վիճակ հանելու աւանդոյթին: Ժողովուրդը իր բուն միջավայրին մէջ կը ստեղծէ աւանդոյթներ եւ կը ծիսականացնէ զանոնք. իր իսկ ժողովուրդի դիմափօն է այդ, իր իսկ էութեան արտացոլումը: Իսկ բուն միջավայրէն դուրս, սփիւռքեան իրականութեան մէջ, երբ ան պարբերաբար կը վերադառնայ աւանդոյթին, ատով կը ճշրտէ օտարութեան քառեակ հողմերէն աղաւաղուող իր դիմափօնը: Այս իմաստով բուն միջավայրէն դուրս որեւէ ժողովրդական աւանդոյթի արժէքը կարծէք աւելի սրուած կ'ըլլայ: Հաւանաբար այդ էր պատճառը, որ որպէս համերփային նիւթ աւանդական տօնի մը ընտրութեան աղափարը ծնաւ ինքնաբերաբար ...

Համբարձման հանդէսին ներկայացուած տօնակատարական նկարաթութիւններն ու բացատրութիւնները րուեցան արժեւորելով այդ թեմային առընչուած րաւոր աղբիւրները. իսկ ընթերցուած վիճակի քառեակները համապատասխան րբոյկներէ քաղուածքներ էին լեզուական որոշակի պատշաճեցումներով:

Գահիրէի ՀԲԸՄ-ի Ծիածան մանկական երփախումբը արդէն մէկ տարեկան է եւ ես սիրով կը շնորհաւորեմ բոլոր ծիածանցիները եւ խումբի ստեղծման նախաձեռնողները այս բարեբաստիկ առիթով:

Ծիածանի աշխատանքային ու համերփային յաջողութիւններուն մէջ իր անուրանալի ներդրումը ունի տիկին Գոհար Ղազէլեան, որ երփախումբի ստեղծման առաջին իսկ օրէն կամաւորաբար միացաւ անոր աշխատանքներուն: Ան մանկավարժական իր բնատուր տաղանդով եւ երփ ուսուցչուհիի իր փորձառութեամբ, մեծապէս նպաստեց երփախումբին կայացմանը: Միասնաբար, կառչած Եղարուեստական նոյն աղափարին ու լծուած իրաործուններու նոյն նպատակին, կը փորձենք մեր ներդրումը ունենալ այստեղ, այնքան ժամանակ, քանի դեռ կը տնուիք այս հիւրընկալ ու սրտբաց աղութին մէջ:

*Հ. Արդեօք այս նիւթը ընտրելով կը փորձէք հայկական աւանդութիւնները վերակենդանացնել եփախումբի աղութէն ներս:*

Պ. Յաւակնութիւն չունիմ աւանդութիւններ վերակենդանացնելու առաքելութիւն ստանձնելու, բայց եթէ իւրաքանչիւր առիթ ու պատեհութիւն օտարածել փտանք եւ ամէն կարելիութեամբ հայկականութեան յաւելեալ կայծ մը կարենանք





արծարծել հանդիսատեսին հոփին մեջ՝ օր մը հայկականութեան հրդեհներ պիտի տնենք այդ տեղ ...

*Հ. Կրնա՞յ ըլլալ, որ ապա ային «Ծիածան»-ի փոքրիկներէն ունենանք մենակատարներ եւ մենակատարուհիներ:*

Պ. Մասնա խտակական իմաստով ամէն մէկ կայացած անձնաւորութիւն բազմահազար «մանր» յաջողութիւններու հանրա ունարի արդիւնք է սովորաբար:

Ծիածան մանկական եր չախումբին մէջ կան ձայնային եւ լսողական տուեալներով քանի մը փոքրիկներ, որոնք եթէ ձայնափոխման շրջանը բոլորեն դրական կերպով, եթէ պահպանեն ու զար ացնեն իրենց լսողական ու ձայնային ունակութիւնները, եթէ պահպանեն սերը արուեստի այս տեսակին հանդէպ եւ եթէ ապա այ տարիներուն ալ ունենան բեմական կեանքի ուրծնական կարելիութիւններ, ինչո՞ւ չէ, կրնան համալրել մեներ ային ուրծունեութեամբ զբաղուողներուն շարքերը:

*Հ. Կարծեմ պեսաք թէ ներկաները որքան նահապետցին համեր ք. չեր կարծիքով միւ՞թը, երե՞րը, չայնե՞րը, թէ բնայարդարումը զիրենք աւելի րաւեցին:*

Պ. Այդ հարցին աւելի ճշ րիտ կրնային պատասխանել անշուշտ իրենք՝ ներկաները: Ինչ կը վերաբերի համեր պատրաստելու արուեստին՝ անշուշտ նկատի կ'առնուին այն բոլոր բաղադրիչները,

որոնք խտակցուած կան չ խտակցուած ազդեցութիւն կրնան ունենալ հանդիսատեսին վրայ: Միշտ ալ առաջնայինը կատարողական մակարդակն է, ապա միւթը, բեմայարդարումը. այսինքն՝ լսողական, տեսողական ու րական աղափարական բաղադրիչները միասին վերցուած: Չեն կրնար այստեղ նկատի չառնուիլ նաեւ ունկնդրին սպասումներուն տեսակները, ժամանակային իմաստով միւթին ներկայացման այժմէականութիւնը եւ այլ ոչ երկրորդական հան ամանքներ:

Այս առթիւ խորին շնորհակալութիւնս պիտի յայտնեն Ծիածանի դաշնակահար տիկին Նանօր Աբիկեանին իր սիրայօժար օ մութեան համար, ինչպէս նաեւ բեմայարդարող ծնողներու քառեակին՝ տիկիններ Ալին Գիզմէճեանին, Նանօր Աբիկեանին, Քարոլին Արսլանեանին եւ տիար Սաստ Նակիպին, որոնք հակառակ անոր որ ի պաշտօնէ ոչ մէկ պարտաւորուածութիւն ունէին, բայց իրենց նուիրումին ու սրտացաւ վերաբերմունքին եւ յատկապէս բարձր ճաշակին ու փայլուն երեւակայութեան շնորհիւ այդ օրը համերաբեմը դարձուցին այնքան տպաւորիչ ու սիրելի:

*Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք Մօ. Միհրան Ղազէլեանին, Մաղթելով իրեն նորանոր յաջողութիւններ:*

Հարցազրոյցը վարեց՝  
Անի Պողոսեան

## ՀՈԳԵՆԱՆԳԻՍՏ ՍԱԹԵՆԻԿ Ը. ՉԱԳՐ

ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովը, ինչպէս նաեւ Եգիպտոսի Շրջանակը ամէն տարուան նման հոգեհանգստեան պաշտօն խնդրած էին մեծանուն բարերարուհի Սաթենիկ Ը. Չագրի հոգույն ի հանգիստ:

Հոգեհանգիստը տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի Կիրակի 22 Մայիս 2005-ին: Պատարագեց Եթովպիոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Միւռն քիւ. Սարգիսեան:

Ներկայ էին Գահիրէի ՀԲԸՄ-ի գանազան մարմիններուն մաս կազմող անդամներ, ինչպէս նաեւ Սաթենիկ Ը. Չագր Հիմնադրամին ընձեռած ընկերային, կրթական, առողջապահական, մշակութային եւ այլ օժանդակութիւններէն ու յատկացումներէն օգտուող կարգ մը անհատներ:

Բարերարուհիին յիշատակը միշտ անմահ է իր բարեգործութիւններով. թող Աստուած լուսաւորէ իր հոգին:



## **ՏԻԱՐ ԴԵՐՃ ԹԵՐՉԵԱՆԻ ՇՐՈՒՄԱՆ ԿԱՅՈՒՄԻ ԶԵԿՈՅՑԸ ԵՐԵՎԱՆԻ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՐՈՒՄԱՆ ԿԱՅՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

«Տեղեկատու»-ի նախորդ թիւով հաղորդած էինք, թէ Երեւանի մէջ Ապրիլ 20-24 Եղեռնի 90-ամեակին առթիւ տեղի ունեցած միջոցառումներուն, Գահիրէի հայ համայնքէն որպէս ներկայացուցիչ պաշտօնական հրաւերով ներկայ եղած էր Գահիրէի Քաղաքական Ժողովի եւ Եգիպտոսի ՅԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ՝ տիար Դերճ Թերզեան:

Տիար Թերզեան Յայաստանէն վերադարձին, Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ, 20 Մայիս 2005-ին, բացառապէս այդ օր բերնէ - բերան լեցուն Առաջնորդարանի դահլիճին մէջ, հրապարակային զեկոյցով մը ելոյթ ունեցաւ:

Ան իր զեկոյցին սկիզբը տեղեկութիւններ տուաւ Երեւանի մէջ Ցեղասպանութեան 90-րդ տարելիցին առթիւ կայացած միջոցառումներուն մասին, ապա՝ ան ներկայ հասարակութիւնը հաղորդակից դարձուց Ապրիլ 20-21-ին Երեւանի Մարիոթ Արմենիա պանդոկին գլխաւոր դահլիճին մէջ կայացած «Ծայրագոյն Յանցանք, Ծայրագոյն մարտահրաւեր, մարդու իրաւունքները ու ցեղասպանութիւնը» միջազգային համաժողովին մանրամասներուն:

Ան հաղորդեց թէ համաժողովը կայացած էր այս առթիւ կազմուած Պետական Յանձնաժողովին հովանաւորութեամբ եւ Յայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան կազմակերպութեամբ, իսկ Չօրեան հիմնարկը օժանդակած էր համաժողովին աշխատանքներուն, մտայնացման եւ կազմակերպչական հարցերուն:

Տիար Թերզեան թուեց Պետական Յանձնաժողովին մաս կազմողներուն անունները, անդրադարձաւ համաժողովին նպատակին, որ ըստ այդ առթիւ բաժնուած գրքոյկի նախաբանին՝ էր, «Անգամ մը եւս փորձել հասկնալ ծանրագոյն յանցանքի, Ցեղասպանութեան ակունքները եւ գտնել զայն կանխելու միջոցները, իսկ ծայրագոյն մարտահրաւերը, անցեալը յաղթահարելու ուղիներու որոնումն է», եւ շարունակելով, համեստօրէն ընդգծեց, «չկարծեք որ յաւակնութիւնը կամ կարողութիւնը ունիմ ներկայացնելու համաժողովին ներկայացուած բոլոր նիւթերուն մանրամասնութիւնները: Սակայն, թերեւս կարելի ըլլայ ուրուագծել համաժողովին տարողութիւնը, անդրադառնալ կարգ մը մասնակիցներու հիմնական միտքերուն, յի-

շել քննարկումներու ընթացքին ներկայացուած կարգ մը հարցերը, զուգահեռներ կատարել եւ ընդհանուր խորհրդածութիւններէ ետք եզրափակել»:

Ան նախ անդրադարձաւ համաժողովին առաջին եւ երկրորդ օրերու բացման նիստերուն, որոնց ընթացքին ողջոյնի խօսքով կամ ուղերձով ելոյթ ունեցած էին 6 հոգի, իսկ թիւով 5 նիստերուն՝ ուսումնասիրութիւններ ներկայացուցած՝ 19 հոգի, առաւել՝ նիստերուն ատենավարներն ու քննարկողները: Երկու օրերուն ընթացքին խօսք առած էին 50 հոգի, առանց նկատի ունենալու ներկայ հասարակութենէն խօսք առնողները:

Տիար Թերզեան նշելէ ետք թէ համաժողովին առաջին օրուան բացումը կատարեց Նախագահ Քոչարեան, ըսաւ: «Պիտի փորձեմ իր եւ ուրիշներու խօսքերէն բանալի նախադասութիւններ ներկայացնել, շատ հպանցիկ գաղափար մը տալու համար իրենց խօսած նիւթին մասին»:

Ապա, անցնելէ առաջ զեկուցողներու նիւթերուն, ան ընթերցեց կարգ մը հատուածներ Նախագահին եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսին ելոյթներէն:

Տիար Թերզեան համաժողովին մասնակից 19 գլխաւոր զեկուցողները դասաւորած էր համաձայն իրենց եկած երկիրներուն: Ան տուաւ անոնց եւ որպէս ատենավար եւ քննարկող ելոյթ ունեցողներուն անուններն ու հանգամանքները, ապա՝ անցաւ խօսուած նիւթերուն:

Ան դիտել տուաւ թէ քննարկողները ենթադրուած էին ներկայացուած զեկուցումներուն մասին քննարկումներ կատարել, սակայն գրեթէ միշտ, անոնք իրենց կարգին զեկուցումներ կը կատարէին առանց որ իրենց խօսածը կապ ունենար գլխաւոր նիւթերուն հետ եւ «հետեւաբար, պիտի փորձեմ երեք խմբաւորումներով, ընդհանուր գաղափար մը տալ զեկոյցներուն եւ քննարկումներուն մասին»:

Առաջին խմբաւորման մաս կը կազմէին համաժողովին ներկայ երեք թրքական ծագում ունեցողներ եւ մէկ թրքահայ:

Երկրորդ խմբաւորումը հրեական էր եւ երրորդը՝ Յայաստանի գիտնականներուն խմբաւորումը:



Տիար Թերզեան առաջին երկու խմբաւորումներուն մաս կազմող զեկուցողներէն իւրաքանչիւրը ներկայացուց առանձին, նշեց անոնց զեկուցման կիւղը եւ «բանալի նախադասութիւններով» պարզեց անոնց տեսակետները Յեղասպանութեան, անոր ժխտման եւ ընդունման, անոր ազդեցութեան անհատներու եւ ժամանակակիցներու յարաբերութիւններուն վրայ, նոր ցեղասպանութիւններէ խուսափելու կարելիութիւններուն, Յեղասպանութեան նկատմամբ Թուրքիոյ եւ Իսրայէլի դիրքորոշումին, հայ-թրքական հաշտեցման ուղիներուն, եւ Յեղասպանութեան հետ առնչութիւն ունեցող այլ հարցերու մասին, սակայն ըսաւ տիար Թերզեան «Նկատի պէտք է առնել որ մեր յիշած երեք թուրքերը (Մուրատ Պէլկէն, Թաներ Աքչամ, Պասքին Օրրան) որոնք կ'ընդունին հայկական Յեղասպանութիւնը, որեւէ հատուցման մասին խօսք չեն ըներ: Այս պարագան առանձին հարց մըն է, որ լուրջ քննարկման կը կարօտի»:

Անցնելով երրորդ խմբաւորման, ան նշեց, թէ Նիքոլայ Յովհաննիսեանի տեսակետը այն է թէ Յեղասպանութիւնը ունի երեք փուլ. Նախապատրաստութիւն, Բուն Յեղասպանութիւն եւ Յեղասպանութեան շրջան եւ բացի հիմնական երկու կողմերէն կատարող եւ զոհ, երրորդ կողմ՝ տեղական, միջպետական եւ միջազգային մակարդակներու վրայ, որ հանդէս կու գայ կանխարգիլողի, կատարողի կամ չեզոք դիրքերու մէջ: Հայերու պարագային ան օրինակ բերած էր քիւրտերը, չերքէզները, Գերմանիան եւ Աւստրո-Հունգարեան որպէս երրորդ կատարող կողմ, իսկ արաբները որպէս կանխարգիլող: Իսկ Անգլիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը որպէս կանխարգիլող ներուժ:

Հայաստանէն երկրորդ զեկուցող Ռուբէն Սաֆրաստեան իր զեկոյցին մէջ վերլուծած էր Յեղասպանութեան խնդիրը Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ, յանգելով այն եզրակացութեան «որ Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման խնդիրը երիտասարդ հայ դիւանագիտութեան օրակարգին վրայ դնելով, քննութեան կը դրուի անոր հասունութիւնը»:

Միւսնոյն ժամանակ զեկոյցը կը շեշտէ, այն հանգամանքը, որ հետագային եւս եթէ պահպանուի նոյն մօտեցումը, հայոց դիւանագիտութենէն կը պահանջուի վերջնական նպատակներու աւելի պարզ եւ յստակ ձեւաւորում»:

Այս ան առաջադրանքով Միշիկընի Համալսարանի դասախօս, ՀՀ-ի նախկին նախագահին գլխաւոր խորհրդական Ժիրայր Լիպա-

րիտեանի ելոյթին որ նիստերէն մէկուն ատենավարն էր, ըսաւ, թէ ան «որոշ առարկութիւն մը ըրաւ Յեղասպանութիւնը արտաքին քաղաքականութեան մէջ ընդգրկելու հարցին մասին»:

Տիար Թերզեան նշելէ ետք թէ ԱՄՆահանգներէն զեկոյցներ ներկայացնող երեք հայերուն ելոյթներուն տուեալները չունի, բաւարարուեցաւ Վահագն Տատրեանի ներկայացուցած «Յանցագործութիւն մարդկութեան դէմ, անպատժելիութիւնը որպէս գործօն Հայոց Յեղասպանութեան մէջ եւ անոր հետեւանքները» խորագիրը կրող զեկոյցին եւ անոր պարզաբանումներուն:

Համաժողովին ներկայացուած ամենէն մանրամասն եւ հետաքրքրական զեկոյցներէն մէկը համաձայն Տիար Թերզեանի իրլանտայի Ազգային Համալսարանէն Ուիլիըմ Շապասի զեկոյցն էր որ ուներ «Անիծեալ Խարան. Յեղասպանութեան յանցանքի մեկնաբանութեան հոլովոյթը» խորագիրը:

Ան որոշ մեկնաբանութիւններ տուաւ Յեղասպանութեան ձեւակերպման եւ Յեղասպանութեան եւ էթնիք մաքրագործման զատորոշման մասին:

Եւ վերջապէս ան անդրադարձաւ ՀՀ-ի արտաքին գործերու նախարար Վարդան Օսկանեանի անգլերէնով ունեցած հոյակապ եզրափակիչ ելոյթին, որ գերազանց կատարելութեամբ կը ներկայացներ Յեղասպանութեան հարցին վերաբերեալ հայկական պետական թէ ժողովրդական դիրքորոշումը: Ան Օսկանեանի ելոյթէն թարգմանաբար ընթերցեց հատուածներ (տես ելոյթը նախորդ թիւին մէջ):

Երեւանի մէջ կայացած համաժողովին տարողութիւնը ու ակադեմական ու գիտական կշիռով ստեղծած պատկառելի մթնոլորտը եւ անջնջելի տպաւորութիւնը, տիար Թերզեան բացառիկ բժախնդրութեամբ, խղճմտանքով եւ հասկնալի ոճով պատրաստած զեկոյցով փոխանցեց ներկաներուն, որոնք եւս վստահօրէն ունեցան անջնջելի տպաւորութիւն:

Չեկոյցին աւարտին Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեան կարճ խօսքով ելոյթ ունեցաւ, գնահատեց տիար Թերզեանի պատրաստած զեկոյցը, իսկ Եգիպտահայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ՝ այժմ ընտրեալ Առաջնորդ Հոգ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեան շնորհակալական խօսքով եւ «Պահպանիչ»-ով փակեց երեկոն:



## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱԿՆԵՐԸ\*

Դաստիարակել կը նշանակե փոխանցել, դաստիարակել կը նշանակե սորվեցնել, դաստիարակել կը նշանակե մշակել: Ի՞նչ փոխանցել, ի՞նչ սորվեցնել, ի՞նչ մշակել: Փոխանցել փորձառութիւններ, գիտելիքներ, հոգեկան եւ բարոյական արժէքներ: Սորվեցնել՝ փոխանցուածը իւրացնել եւ ինքնութեան մաս դարձնել, անբաժանելի տարր: Մշակել՝ իւրացուածը արժեւորել եւ անընդհատ ձգտիլ բարելաման, այլ խօսքով բարելաւել ժառանգուածը եւ ժառանգածը:

Հիմնական կը սեպեմ այն, թէ ո՞րքա՞ն աշակերտ կամ անձ ինչպէս կը կառուցէ իր ստացած նոր գիտելիքները: Պէտք է իմանանք, թէ՛ որքա՞ն նոր գիտելիք կը հիմնուի նախապէս ամբարուած գիտելիքներու վրայ: Յաճախ նկատելի է, որքա՞ն նոր գիտելիք երկու տարբեր անձերու կողմէ կ'ընկալուի տարբեր ձեւերով եւ տարբեր մակարդակներով: Որովհետեւ, մինչ այդ՝ երկուքը ունեցած են տարբեր մակարդակի գիտելիքներ եւ փորձառութիւններ: Կ'ուզեմ օրինակով մը յստակացնել ըսածս: Մանուկ մը կը տեսնէ, թէ՛ մայրը գոյնը կարմիր հեղուկ մը կը խմէ, մայրը նկատելով փոքրիկին հետաքրքրութիւնը գաւաթը երկարելով կը հարցնէ՝ լուիկի հիւթ կը խմե՞ս: Մանուկը գլուխը կը շարժէ՝ այդ ըսելով, բայց հագիւ թէ ումպ մը կ'առնէ, կը դադրի խմելէ, ըսելով թէ այս հիւթ չէ, որովհետեւ իր նախապէս գիտցած հիւթը, նարինջի համեղ հիւթն է: Ժիշդ այս պահուն երախային միտքին մէջ կը ստեղծուի անհաւասարակշռութիւն մը, իր նախօրօք գիտցածին եւ նոր առաջադրուած գիտելիքներուն միջեւ:

Երախային միտքին մէջ հարցումներ կը յառաջանան, եւ կը փորձէ պատասխաններ գտնել այդ հարցումներուն, որպէսզի անհաւասարակշռութիւնը վերածուի հաւասարակշռութեան: Եւ մանուկը կը սկսի գիտակցիլ թէ կան տարբեր տեսակի հիւթեր, հիւթեր որ կը սիրէ, հիւթեր որ չի սիրեր, կան թանձր եւ նօսր հիւթեր: Եւ այսպիսով հիւթի հասկացողութիւնը մանուկին մօտ աւելի կ'ընդլայնի ու աւելի կը բիւրեղանայ եւ մանուկը կը հարստանայ նոր փորձառութեամբ:

Որքա՞ն գիտելիք, փորձառութիւն փոխանցելու համար կարիքը ունինք նիւթին, նիւթը փոխանցողին՝ մատուցողին եւ ստացողին: Ի՞նչ պէտք է փոխանցել, ասոր վերաբերեալ կը կարծեմ, որ բո-

լորս ալ ունինք որոշ ընդհանուր, միասնական գաղափարներ: Օրինակ՝ ազգային կրթութիւն, դաստիարակութիւն, գիտութիւն, կենցաղավարութիւն:

Կը նկատենք, թէ փոխանցելիք շա՛տ բան ունինք: Իսկ որո՞ւ պիտի փոխանցենք այս ամէնը: Հարկ է անդրադառնալ, որ բաւարար չէ միայն նոր սերունդին փոխանցելը, այլ ծնողներուն, միութիւններու պատասխանատուներուն, մէկ խօսքով բոլոր անոնց որոնք կապ ունին նոր սերունդի դաստիարակութեան հետ եւ կը յաւակնին դաստիարակել: Մէկ խօսքով, պէտք է յատուկ եւ նպատակամղուած աշխատանք տանիլ՝ ստեղծելու նոր մտածելակերպ:

Իսկ ովքեր պէտք է ըլլան փոխանցողները: Մենք, կրթական մշակներս պէտք է փոխանցենք մեզի ժառանգ մնացած փորձառութիւններն ու գիտելիքները, աւելի մշակուած եւ զարգացած այսօրուան պահանջներուն համաձայն:

Յստակ է, թէ ո՞վ պիտի փոխանցէ, որո՞ւ պէտք է փոխանցուի, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ:

Ինչպէ՞սը պարզելու համար դարձեալ պիտի վերադառնամ վերոյիշեալ օրինակին, թէ ինչպէս երախայի միտքին մէջ հարցը յառաջացաւ եւ փորձեց գտնել պատասխանը եւ այդպիսով լուծուեցաւ իր միտքին մէջ ստեղծուած անհաւասարակշռութիւնը, որուն արդիւնքը եղաւ այն, որ մանուկը նոր բան մը սորվեցաւ: Այսպիսով նկատի պէտք է առնել, որ երախային միտքին մէջ ձեւաւորուած հարցումն է ամէնէն ազդու միջոցը գիտելիքներ իւրացնելու մէջ: Երախան պարզապէս մատուցուածը այնքան դիւրաւ չ'ընկալէր, որքան իր կողմէ փնտռուածը: Փորձը ցոյց կու տայ, թէ տրուածը այնքան հարազատօրէն կ'իւրացուի մեր կողմէ, որքանով ան կը համապատասխանէ ներքին փնտռտուքի մը, սպասումի մը, պահանջքի մը: Հարցումը հետաքրքրութիւնը բաւարարելու հիմնական միջոցն է:

Տեղին է անդրադառնալ, որ անհատի զարգացումը կ'ընթանայ երեք տարբեր ուղղութիւններով: Առաջինը՝ իմացական-ճանաչողական զարգացումը, երկրորդը՝ ֆիզիքական զարգացումը, երր կը զարգանայ մանուկին մկանային, մարմնական համակարգը, եւ երրորդը՝ մանուկին

\* Հալէպի Լազար Նաճարեան – Գ. Կիւլպէնկեան վարժարանի տնօրէն Պր. Ա. Պա. ալեանի սոյն գեկոյցը ընթերցուած է Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդի կազմակերպած համա-ուճարին, Հալէպ, 18 Դեկտեմբեր 2004 եւ լոյս տեսած է «Խօսնակ» Յունուար - Փետրուար 2005-ի թիւին մէջ:



զգացական եւ յուզական ներաշխարհը եւ յարաբերութիւնը արտաքին աշխարհին եւ շրջապատին հետ, երբ կը սորվի լսել շրջապատը, յարգել ուրիշներուն գաղափարները, կը սկսի ընդհանուրին մէկ մասնիկը դառնալ, կիսել սեփական մտահոգութիւնները, երբ կը սորվի արտայայտուիլ, որոշումներ կայացնել, պատասխանատուութեան գիտակցութիւն ձեռք բերել:

Իրողութիւն է, որ մեր դպրոցներէն ներս, երախաները կը զարգանան միայն առաջին երկու ուղղութիւններով, իսկ երրորդը, որ այնքան կարեւոր է, հարկ եղած ուշադրութեան չ'արժանանար: Ճիշդ այդ պատճառով, կը նկատենք, թէ մեր զաւակները իրարու հետ խաղալ չեն գիտեր, զիրար լսել, յարգել չեն գիտեր, եւ ամէնէն էականը՝ առանձին որոշում չեն կրնար առնել, եւ միշտ կարիքն ունին անձի մը, որ իրենց փոխարէն որոշումներ կայացնէ, պատասխանատուութենէ կը խուսափին: Կը նմանին անմեղ գառնուկներու, որոնք կ'առաջնորդուին հովիւներու կողմէ եւ առանց հովիւի պարզապէս կը մոլորին:

Իսկ մենք կը շարունակենք այսպէս նոր սերունդը, որ անգիտակից է, անպատասխանատու: Կը պահանջենք, որ մեր ակնկալած մեր սպասած ձեռով փոխադարձեն մեր զաւակները, մինչ մենք՝ մեծերս պէտք եղածը չենք կրցած փոխանցել իրենց:

Յարգելի ներկաներ, եկեք միասին հարցնենք, թէ ներկայ սերունդին մէջ լաւերը չկա՞ն, ի հարկէ կան եւ շա՛տ: Իսկ նախորդ սերունդներու պարագային, որ այսօր օրինակ կը բերենք՝ վատեր չկա՞յին: Կային: Ուստի լաւի եւ վատի հարց չէ, սերունդները իրենց անհատներով նոյնն են, ակընկալութիւններն ու հետաքրքրութիւններն են, որ կը փոխուին՝ մանաւանդ որ ներկայիս կեանքին պահանջածը շատ ավելի խրթին է ու դժուարհասանելի:

Ներկայ դարաշրջանին, պէտք է պատրաստել այնպիսի անհատներ, որոնք ունին որոշումներ կայացնելու, ծրագրեր մշակելու, նպատակներ հետապնդելու եւ առաջնորդելու կարողականութիւն եւ ձեռնհասութիւն:

Այս բոլորը կարելի է իրականացնել իմացական ճանաչողական եւ ֆիզիքական զարգացման կողքին, զարգացման միայն երրորդ ուղղութեան ամկայութեամբ, այսինքն անհրաժեշտաբար յղկելով եւ կրթելով մեր զաւակներուն զգացական եւ յուզական ներաշխարհը:

Եզրակացնենք, որ մեր նոր սերունդի իրավիճակը անբաւարար է եւ պէտք է ընդունինք, որ մեր անտարբեր մօտեցումն ու անհոգութիւնն է գլխա-

ւոր պատճառը:

Դաստիարակութեան նոր եղանակները սխալ կերպով թարգմանեցինք. ազատութիւն տալը ամենայն թողտուութեան հետ շփոթեցինք եւ մոռցանք ուղղելը, մոռցանք ճիշդը սորվեցնելը, եւ կամ միայն հրահանգներով՝ առանց բացատրութիւններու առաջնորդեցինք:

Համակարգիչի գործածութիւնը նոյնպէս սխալ կերպով ընկալուեցաւ, անոր օգտակար եւ կարեւոր դերը վերցուեցաւ եւ դարձաւ միտքը բթացնող խաղերու միջոց, իսկ համացանցը գիտելիք եւ տեղեկութիւններ փոխանցելու փոխարէն «չաթ»ի աղբիւր: Եւ այսպիսով դարձեալ սխալ եւ թերի կերպով ընթացաւ ճարտարագիտութեան օգտագործումը: Կարելորդ անկարելորդէն չկրցանք զանազանել, դիւրին ճամբան ընտրեցինք, եւ այսօր լուծումներ կը փնտռենք, մինչ պատասխանները յայտնի են: Մենք պէտք է անընդհատ բարելաւենք մենք զմեզ ատակ մնալու դաստիարակի կոչումին, ինչպէս որ պայման դրի խօսքիս սկիզբը, իւրացուածը բարելաւել եւ ապա՝ գործնական քայլեր առնել:


Ալեկոծ ծովուն մէջ տատանող նաւը ցամաք հասնելու համար, փարոսի կարիքն ունի, ցամաքը նպատակն է, փարոսը ուղղութիւնը ճշդողը: Մենք ալ որպէս կրթական մշակներ, կարիքն ունինք ճշդելու, թէ՛ մենք ի՞նչ նպատակ կը հետապնդենք եւ ինչո՞ւ: Այս մէկը ճշդելով որոշած կ'ըլլանք թէ ինչպիսի՞ դաստիարակութիւն պէտք է ջամբել մեր ապագայ սերունդներուն: Մեր նպատակն է դաստիարակել որպէս իսկական հայ եւ քաղաքացի, տեր կանգնիլ մեր ազգային ժառանգութեան, պահել մեր մայրենի լեզուն, մնալ հաւատարիմ մեր ազգային եկեղեցիին, մեր մշակոյթին եւ ամենայնպէս ներսերունն եւ ամէնէն կարելորդ՝ միշտ բարելաւել մեր անհատներու որակը: Կը հաւատամ, որ պէտք է մեր բոլորին կիզակետը ըլլայ իւրաքանչիւր հայ անհատ, որովհետեւ անհատներու որակի բարելաւումը կ'առաջնորդէ ազգային դաստիարակութեան բարելաւումին: Եւ դարձեալ կը դառնանք բարձր արժանիքներով լեցուն ազգ, ինչպէս եղած ենք անցեալին: Եթէ մենք որպէս կրթական մշակներ, կարենանք որակաւոր անհատներ կերտել, վստահ եմ, որ անոնք իրենց մէջ կ'ունենան նաեւ իրենց եսին առընթեր հաւաքական եսին գիտակցութիւնը, որ այնքան անհրաժեշտ է ապահովելու համար վերածնունդը մեր ազգային հպարտութեան:

Ալետիս Պազգալեան



# ՏՈՔԹ. ԱԿԵՏԻՍ ԵԱՓՈՒՃԵԱՆԻ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ

Աւստրալիոյ ԶԲԸՄիութեան Սիտնիի Մասնաճիւղի պաշտօնաթերթ «Միութիւն» ամսաթերթի Մայիս 2005-ի թիւը կը հաղորդէ, թէ Ամենայն Զայոց Զայրապետ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը Ս. Սահակ-Ս. Մետրոպ շքանշանով պարգեւատրած է «Միութիւն» ամսագրի խմբագիր տոքթ. Աւետիս Եափուճեանը, իր գրական - հասարակական գործունեութեան 60-ամեակին եւ ծննդեան 75-ամեակին առիթներով:



Կիրակի, 1 Մայիս 2005-ին, Սիտնիի Ս. Յարութիւն Եկեղեցիին մէջ, յաւարտ Ս. Պատարագի, Զայրապետական Կոնդակը շքանշանակիրին յանձնած է Աւստրալահայ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աղան Արք. Պալիոզեան, իսկ շքանշանի տուչութիւնը տեղի ունեցած է Ուրբաթ, 20 Մայիսին, ԶԲԸՄ-ի Սիտնիի Մասնաճիւղին այս առիթներով տոքթ. Աւետիս Եափուճեանի ի պատիւ կազմակերպած Յաբելեանական ճաշկերոյթ-հանդիսութեան ընթացքին:

Կը շնորհաւորենք տոքթ. Աւետիս Եափուճեանը, մաղթելով իրեն առողջ կեանք ու առաւել բեղուն գործունեութիւն:

«Տ.»

Ստորեւ ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեանի յօբելեարին յղած շնորհաւորական գիրը:

ԴԻՄՆՈՒՄԸ 1906-ԻՆ ԳԱԴԻՐԷ		FONDÉE EN 1906 AU CAIRE
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ		UNION GENERAL ARMENIENNE DE BIENFAISANCE
ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ		COMITÉ RÉGIONAL D'EGYPTE
15, Էմատ Էլ Տիճ փողոց - Գահիրէ Հեռաձայն 5919636 Փոստարկը 1079		15, Emad El Dine - Le Caire Tel: 5919636 B.P. 1079 - Le Caire

Գահիրէ, 9 Ապրիլ 2005

Պատուարժան Ատենապետ եւ Անդամներ  
ՀԲԸՄ-ի Սիտնիի Մասնաճիւղի  
Աւստրալիա

Մեծայարգ Տեարք,

Ձեր 10 Յունուար 2005 թուակիր նամակին տեղեկացայ թէ ծրագրուած է 20 Մայիս 2005-ին տօնել Դոկտ. Աւետիս Եափուճեանի 75 ամեակը յօբելեանական հանդիսութեամբ մը:

Այս առթիւ, որպէս յօբելեարին գործունեութեան մօտէն ծանօթ անձ մը, կը փափաքիմ զինք սրտանց շնորհատրել եւ մաղթել որ տակաւին երկար տարիներ շարունակէ իր ծառայութիւնը հայ գրականութեան բազինին, որ սկսած է աշակերտական գրասեղաններէն եւ յաջողութեամբ կը շարունակուի աւելի քան վեց տասնամեակներէ ի վեր, թարգմանական, հրապարակագրական եւ պատմագիտական դրսեւորումներով:

Սոյն շնորհաւորանքին կը միացնեմ նաեւ քաջառողջութեան եւ արեւշատութեան սրտագին բարեմաղթութիւններս:

Լաւագոյն զգացումներով

Պերճ Թերզեան

Ատենապետ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի



## «ՍԱՐՏԱՐԱՊԻԱ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

Գահիրեի եւ Ադեքսանդրիոյ «Չանգեզուր» պարախումբին ելոյթն շաբաթ մը անց, «Չայքովսքի» թատերասրահին մէջ Շաբաթ 7 Մայիս 2005-ին տեղի ունեցաւ «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան կազմակերպած «Սարտարապատ» պարախումբին ելոյթը:

Տիկիններ Գարոլին Մագլումեանի եւ Սիլվա Ասատուրեանի ղեկավարութեամբ փոքրիկներէ եւ

պարման-պարմանուհիներէ կազմուած 44 հոգիից խումբը ելոյթ ունեցաւ 24 պարերով՝ հայկական, արդիական, ռուսական եւ արաբական:

Գնահատելի աշխատանք տարած էին ոչ արհեստավարժ տիկինները հայկական պարարուեստի կարգ մը ձեւեր սորվեցնելու, զանազան զգեստներ պատրաստելու եւ աւելի քան երկու ժամ տեւողութեամբ յայտագիր մը բեմ հանելու համար:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱ ԱԲԻԿԵԱՆ «ԱՅԾԵՄՆԻԿ» ԸՆԿՍԵԱՆ ՏԱՆ ՄԷՋ

1999-ի Ապրիլ ամիսը, իւրայատուկ էր Գահիրեաբնակ խումբ մը երիտասարդներու համար: Եգիպտահայ Թեմի Ողբացեալ Առաջնորդ Տ. Չաւէն Արք. Չինչինեանի նախաձեռնութեամբ, այդ ամիս կազմուեցաւ խումբ մը, որ փափաքը ուներ հետեւելու կրօնական դասընթացներու: Խումբը կոչուեցաւ «Յայ Զրիստոնեայ Ընտանիք», «Յաւատք եւ Գործ» խորհրդանշանով: «Յայ Զրիստոնեայ Ընտանիք»ը գործի անցնելէ առաջ կազմեց երկու խմբակներ:

ա- Ընկերային՝ որ կը զբաղի տարեցներու եւ տարբեր հանգստեան տուներու այցելութեամբ,

բ- Դաստիարակչական՝ որ կը զբաղի գաղութիս մանուկներուն եւ պատանիներուն հոգեւոր դաստիարակութեամբ:

Այս տարուայ Մայիս 6-ի ժողովին առաջարկուեցաւ որ Այծեմնիկի մէջ կայանայ «Ընկերային Օր», որուն ընթացքին պապիկներն ու տատիկները առիթը ունենան իրենց ձեռային աշխատանքները ցուցադրելու եւ հայկական մթնոլորտի մը մէջ վայելելու ներկայութիւնը գաղութին զաւակներուն:

Եւ իրապէս Եգիպտահայ Թեմի Ընտրեալ Առաջնորդ Յոգ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեանի հովանաւորութեամբ, Այծեմնիկի Վարչու-

թեան հետ գործակցաբար որոշուեցաւ 10 Յունիս 2005-ին, Այծեմնիկի մէջ առաւօտեան ժամը 11-էն մինչեւ կ. վ. ժամը 3 կազմակերպել ընկերային օր մը:

Շատեր միացան մեզի ձեռնարկը յաջողցնելու համար: Յայ Զրիստոնեայ Ընտանիքի անդամներուն հետ ժրջան կերպով կ'աշխատէին Այծեմնիկի Վարչութիւնը, Այծեմնիկի Բարեկամներու խումբը եւ այլ տիկիններ որոնք իրենց շինած անուշեղենները տրամադրեցին այս առթիւ կազմակերպուած պազարին:

Կոկիկ բազմութեան մը ներկայութեան, նախ տեղի ունեցաւ պազարը: Այծեմնիկի տարեցներուն ներկայացուցած ձեռային աշխատանքները մեծապէս գնահատուեցան ներկաներուն կողմէ, ապա Յայ Զրիստոնեայ Ընտանիքի Կիրակնօրեայ Յոգեւոր



Յոգ. Տ. Աշոտ Վրդ. Մնացականեան ներկաներուն հետ գրոյցի պահուն:

Ի Ը Ընտանիքի Կիրակնօրեայ Յոգեւոր դասընթացներու մանուկները ելոյթի պահուն, խմբավարութեամբ տիկին Գոհար Ղազէլեանի:





Պագարին տարեցներուն ներկայացուցած ցուցուներէն մաս մը:

Դասընթացքներու մասնակցող մանուկները, իրենց սորված երգերով ելոյթ ունեցան, ի մ բ ա վ ա ղ ա ղ ա ղ թեամբ տիկ. Գոհար Ղազէլեանի, որ սիրայօժար ստանձնած է սոյն խումբին խմբավարութիւնը: Ելոյթ ունեցաւ ևս-

ել ինք եւ իր քաղցր ձայնով խանդավառեց ներկաները, երգելով «Ազգ Փառապանծ» երգը որուն միացան բոլորը, ապա եգիպտահայ սիրուած երգչուհի տիկ. Սիլվա Թերզիպաշեան «Մոկաց Յարսներ»-ը երգով կարողացաւ բոլորին սիրտերը ջերմացնել: «Չանգեզուր» եւ «Սարտարապատ» խումբերու մանուկներէն մաս մը հայկա-

կան տարբեր պարերով ելոյթ ունեցան, իսկ Օր. Նեկտար Յարութիւնեան ներկայացուց մենապար մը:

Տ. Աշոտ Կող. Մնացականեանի ներկայութիւնը, գրոյցը տարեցներուն հետ ու մասնակցութիւնը ճաշին, հոգեկան բաւարարութիւն պատճառեց «Այծեմնիկ»-ի պատսպարեալներուն, որոնք կեսօրուայ ճաշի սպասարկութենէն ետք, հայկական երաժշտութեամբ խանդավառուած երգեցին ու պարեցին ներկաներուն հետ:

Այդ օրուան գլխաւոր նպատակն էր գաղութին զաւակներուն Այծեմնիկ Հանգստեան Տուն այցելութեամբ, խանդավառ մթնոլորտ մը ստեղծել տարեցներուն համար, որ կը խորհինք թէ յաջողեցաւ: Փափաքելի է, որ նման հանդիպումները յաճախ կրկնուին:

Անի Պօղոսեան

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆ - ԳԱՀԻՐԷ

### ՍԱԹԵՆԻԿ Դ. ՉԱԳՂՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿՐԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 2005-2006 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Դ. Չագըր Հիմնադրամը 2005-2006 տարեշրջանին եւս կրթաթոշակ պիտի յատկացնէ արժանաւոր ուսանողներու, որոնք կրնան անձամբ ներկայանալ Հ.Բ.Ը.Մ.ի Հելիոպոլսոյ գրասենեակը, լեցնելու համար յատուկ հարցաթերթիկը, իրենց հետ ունենալով 2 լուսանկար, ծննդեան վկայականի պատճեն, դիմումագիր մը և վերջին երկու տարիներու իրենց վիճակացոյցները:

Աղեքսանդրիոյ թեկնածուները՝ պարտին իրենց դիմումագրերը ներկայացնել Աղեքսանդրիոյ Հ.Բ.Ը.Մ.ի վարչութեան:

Սաթենիկ Դ. Չագըր Հիմնադրամէն արդէն իսկ կրթաթոշակ ստացողները պարտին դրկել նախորդ տարեշրջանին ա. և բ. կիսամեայի կամ տարեվերջի քննութեանց արդիւնքները, - անմիջապէս որ զանոնք ստանան իրենց յաճախած կրթական հաստատութիւններէն:

Բոլոր տեսակի դիմումագրերը (նոր և վերանորոգելի) ընդունելու վերջին պայմանաժամն է՝ Աղեքսանդրիոյ համար, 16 Սեպտեմբեր 2005, և Գահիրէի համար՝ 20 Սեպտեմբեր 2005:

Ծ. Յաւելեալ մանրամասնութիւններու համար հեռաձայնել 2916444 – 4151127 - 4152478 քիւերուն:





## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆ - ԳԱՀԻՐԷ

### ՍԱԹԵՆԻԿ Ը. ՉԱԳԸՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿՐԹԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամը, 2004-2005 տարեշրջանին համար, դրամական մրցանակներ պիտի տրամադրի եգիպտահայ համայնքին պատկանող բոլոր այն ուսանողներուն, որոնք փայլուն արդիւնքներ կը բերեն որեւէ կրթական հանգրուանի ասարտական քննութիւններուն:

Այսպէս, մրցանակներ պիտի տրամադրուին նախակրթարանի, պատրաստականի, երկրորդականի և համալսարանական կրթութեան ասարտական կարգերու՝ պետական կամ համազօր քննութիւններու ներկայացող բոլոր այն աշակերտներուն որոնք 90% եւ ավելի արդիւնք բերած են:

Դրամական մրցանակները իրաքանջիւր կրթական հանգրուանի համար են և պիտի տրամադրուին հետեւեալ ձեւով.

Նախակրթարանի ասարտական դասարան	Ե.Ո.100.-
Պատրաստականի ասարտական դասարան	Ե.Ո.200.-
Երկրորդականի ասարտական դասարան	Ե.Ո.500.-
Համալսարանի ասարտական տարի	
ա- Շատ լաւ արդիւնք	Ե.Ո.800.-
բ- Գերազանց արդիւնք	Ե.Ո.1000.-

Գահիրեի դիմորդները իրենց ձեռք բերած կրթական արդիւնքը հաստատող փաստաթուղթը և անկէ պատճէն մը, պարտին ներկայացնել Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրեի գրասենեակը:

Աղեքսանդրիոյ դիմորդները պարտին նոյները ներկայացնել Աղեքսանդրիոյ Հ.Բ.Ը.Մ.ի վարչութեան:

Բոլոր դիմումները ընդունելու վերջին պայմանաժամն է 15 Սեպտեմբեր 2005:


Մրցանակներու յանձնումը թէ՛ Գահիրեի և թէ՛ Աղեքսանդրիոյ մէջ պիտի կայանայ հանդիսատր իրադրութեամբ:

ՎԱՐՉՈՒԹԻԻՆ



# ԱՆԴԱՄԱԿԱՆ

## ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Խոր ցառով իմացանք մահուան բօքը ՀԲԸՄ-ի Ե իսպոսի Շրջանակային Յանձնաժողովի նախկին երկարամեայ անդամին՝ Օննիկ Ալիքսանեանի, որ տեղի ունեցած է Մոնրեալի մեջ Յուլիս 29-ին:

Այս մեծ եւ տխուր կորուստին առթիւ «Տեղեկատու»-ն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին այրիին՝ տիկին Ալիսին, զաւակներուն՝ տիար Օննո Ալիքսատանի եւ տեր եւ տիկին Վահէ եւ Նորա Սեդրակեաններուն, թոռներուն եւ բոլոր հարազատներուն:

















# ULTIMATE CRIME, ULTIMATE CHALLENGE

An International Conference on the 90th Anniversary of the Armenian Genocide  
CLOSING ADDRESS

By Vartan Oskanian  
Minister of Foreign Affairs  
Republic of Armenia

On behalf of the National Commission, I wish to publicly express our sincere appreciation to everyone who has participated in this conference. I want to thank the Zoryan Institute for their professional and organizational counsel. I especially wish to thank the scholars, writers, professors - all with serious work and time commitments - who traveled to Armenia to be here with us at this time, this year. The symbolism is not lost on anyone. We are here 90 years later calling for recognition and prevention so that in 2015 we can gather together only for remembrance.

Over these two days, each of our speakers has found various eloquent ways of saying the following:

Genocide is the ultimate crime against humanity. It is the extreme abuse of power. It is a betrayal of the responsibility of custody by the very people entrusted with insuring the security of their own population. The human rights challenge facing all of us is to be able to recognize that a government has the capacity for such immorality and inhumanity, and that particular governments have indeed committed genocide.

There is no national history in a vacuum. No nation can escape its history entirely, it can only transcend it. But to transcend, one must confront history, both internally and in relation to others. And those others, too, must also jointly confront theirs.

In other words, Armenia and Turkey must confront their histories. Individually and together. Armenia believes Turkey must put excuses aside and enter into normal relations with a neighbor that is neither going to go away nor forget its history.

We are not the only neighbors in the world who have had, and who continue to have, a troubled relationship. Troubled memories, a tortured past, recriminations, unsettled accounts and the enduring wounds of victimhood, plague the national consciousness of peoples on many borders. In our case, some distance between our two countries might have allowed us to put distance between our past and our future. But we have no such luxury. There is no space, no cushion, between us. We live right here, close by, reminded at all times of the great loss that we incurred. Yet it is because we live right next door that we must be willing and prepared to transcend the past.

But we can only do so if the demons of the past have been rejected by our neighbor, too. You notice, I didn't say 'by the perpetrator.' Armenians are able to distinguish between the perpetrators and today's govern-



ment of Turkey. Two-thirds of the Armenian population of the Ottoman Empire were massacred or deported between 1915 and 1918. Today's Republic of Turkey must be able to condemn these acts for what they are. The evidence is overwhelming, clear, unavoidable.

Armenians were one of the largest minorities of the Ottoman Empire. Where did they go? Is it possible that all our grandmothers and grandfathers colluded and created stories? Where are the

descendants of the Armenians who built the hundreds of churches and monasteries whose ruins still stand in Turkey? Is US Ambassador Henry Morgenthau's account of the atrocities that he witnessed a lie? Why was a military tribunal convened at the end of World War I, and why did it find Ottoman Turkish leaders guilty of ordering the mass murder of Armenians? How does one explain the thousands and thousands of pages in the official records of a dozen countries documenting the plans to exterminate the Armenian population of the Ottoman Empire? If it wasn't genocide and they were simply 'war time deportations' of so-called rebellious Armenian populations near the eastern border with the Russian Empire, as Turkish apologists sometimes claim, why were the homes of Armenians in the western cities looted and burned? Why were the Armenians of the seacoast towns of Smyrna and Constantinople deported? Boatloads of people were dumped in the sea - is that what deportation is all about? Could rounding up scores of intellectuals on a single night and killing them be anything but premeditation?

When a government plans to do away with its own population to solve a political problem - that's genocide. At the turn of the 20th century, the Ottoman Empire was shrinking, it was losing its hold over its subjects along the periphery of the empire. For fear that in Anatolia, too, the Armenian minority would agitate for greater rights and invite foreign powers to exert pressure, the Ottoman leadership used the cover of World War I to attempt to wipe out the Armenians, beginning with the leadership, following with the men, and finally deporting women, children and the elderly.

This fits neatly into the definition of genocide: The perpetrator did cause a multitude of deaths; these persons did belong to a particular national, ethnical, racial or religious group. The perpetrator intended to and in fact did destroy, in whole or in part, that national, ethnical, racial or religious group, and this destruction followed a consistent pattern. In fact, US Ambassador



Henry Morgenthau called what he witnessed, the Murder of a Nation. Others called it 'race murder'. They did so because there was no term Genocide yet. When the word was finally coined in 1944 by Raphael Lemkin, it was done with clear reference to genocidal acts prior to that date, the Armenian Genocide included. There is no doubt that if the word genocide had existed in 1915, every one of the hundreds of articles in the NY times or elsewhere, would have used the term. Look how frequently the word 'genocide' is used today to describe events and cases where the scale and depth of the atrocities are incomparable.

Armenians continue to live with the memory of suffering unrelieved by strong condemnation and unequivocal recognition.

On the contrary, Turkey spends untold amounts to deny, dismiss, distort history. Not just money, either. Today, their continued insistence on rejecting and rewriting history costs them credibility and time. One does not knock on Europe's door by blindfolding historians and gagging writers. Especially when the subject at hand is one as grave and consequential as genocide. The Turkish parliament's recent call to revisit, review, revise the documents gathered by Arnold Toynbee and James Bryce for the British Blue Book series brought the revisionist efforts to a new low. Turkey has moved on from trying to rewrite its own history to thinking it can convince others to rewrite theirs. This only frustrates the process, exacerbates the emotions and refuels the fury. Worse, such cynical moves embolden those who do not believe in reconciliation, understanding its great risks and costs.

Elie Wiesel has said that denial of genocide is the final stage of genocide because it "strives to shape history in order to demonize the victims and rehabilitate the perpetrators." That is what Turkey - not the people but the government - is trying to do. Today's Turks do not bear the guilt of the perpetrators, unless they choose to defend and identify with them. Armenians and Turks, together with the rest of the modern world, can reject the actions and denounce the crimes of the Ottoman Empire.

Turkey must also de-link history from politics. The excuses about what might follow genocide recognition are just that - excuses. Why are they surprised that Ararat is on our state seal? Armenians have lived on these lands for thousands of years, and Armenia's borders have changed a great deal over the millennia. That's a historical fact. The Armenian kingdom stretched from sea to sea. That's a historical fact. The last change came at the beginning of the 20th century. That, too, is a historical fact. By the provisions of the Treaty of Sevres, the territory of Armenia was ten times what it is today. That is a historical fact as is the fact that Turkey defied the treaty which had been signed by its own government, and by force, created a new de facto situation, which led to the signing of another agreement, without the same signatories. This new agreement delineated, more or less, today's borders. That

too is historical fact.

But it is a political reality that both Turkey and Armenia exist today in the international community with their current borders. It is a political reality that we are neighbors and we will live alongside each other. It is a political reality that Armenia is not a security threat to Turkey. And finally, it is a reality that it is today's Armenia that calls for the establishment of diplomatic relations with today's Turkey.

For these reasons, anything beyond genocide recognition has not been and is not on Armenia's foreign policy agenda.

Yesterday I was being interviewed by a Turkish television crew. I was surprised at the amount of misinformation that they had. They were surprised that the Armenian-Turkish border is open from the Armenian side, that it is Turkey that keeps it closed. They were surprised that Armenia has no pre-conditions for establishing diplomatic relations with Turkey. They were highly surprised that even the recognition of Genocide is not a precondition. They were also surprised that the Kars Treaty has not been denounced or revoked by the Government of Armenia. Now I'm surprised that official Turkish propaganda has taken over and blurred the views of many.

There's another misunderstanding. By default, people assume that we're opposed to Turkey's membership in the EU. They're wrong on this one too. Of course we would like to see Turkey become an EU member. Of course we'd like to see that Turkey meets all European standards. We'd like to see that Turkey resemble Belgium, Italy and others. We'd like to see Turkey become an EU member so that our borders will be open, so that our compatriots and Turkish scholars will speak more freely about Genocide. We would like to see Turkey as a member so that our churches and properties will be protected and restored.

Armenia believes that, at exactly this time, when Turkey is having to reconsider human and civil rights, freedom of expression and religion, it must be encouraged, and persuaded, to acknowledge its past. Such encouragement and persuasion must come from both outside - and more importantly, as Hrant Dink stressed yesterday - from within Turkish society.

Turkish writers and politicians have begun that difficult process of introspection and study. Some are doing so publicly and with great transparency. We can only assume that Europe will expect that a Turkey which is serious about EU membership, which is indeed able to juggle the complex relationships that EU membership entails, will have to come to terms with its past.

In this context, it is essential that the international community doesn't bend the rules, doesn't turn a blind eye, doesn't lower its standards, but instead consistently extends its hand, its example, its own history of transcending, in order for Armenians and Turks, Europeans all, to move on to making new history.





